

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

## ՈՐԻԼԻԱՄ ԶԵՄՍ

հոգեբանութեան պրօֆէսօր Հարվարդի Համալսարանում

## ՅՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿ Ա.

P S Y C H O L O G Y

by

William James

professor of psychology in Harvard University

Տարած „Ե Բ Բ Ա.Կ., Ալեքսանդրապոլ

1930

Հետարարին Հայութի Համարանի

## ՈՒԽԵԱՄ ԶԵՄՍ

հոգեբանութեան պրօֆէսօր Հարվարդի Համալսարանում

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿ Ա.

P S Y C H O L O G Y

by

William James  
professor of psychology in Harvard University

Տպարան „Շ Բ Ռ Ա Կ“ Ալիքանդրապոլ

1920

Հայաստանի Համալսարանի անդրանիկ, տռայժմ  
միակ, պատմա-լեզւարանական ֆակուլտէտը բացւեց  
և դորձում է ամենաամնապատ պայմաններում, ո-  
րոնց շարքում գիտական պիտոյքների, դրքերի, ան-  
հրաժեշտ ձեռնարկների խիստ զգալի բացակայութիւ-  
նը անշուշտ ամենակարևորներից մէկն է։ Ֆակուլ-  
տէտը չունէ ոչ դասախոսների, ոչ ուսանողների կա-  
րիքները քիչ թէ շատ բաւարարող մի գրադարան,  
բաւարար գրադարաններ գոյութիւն չունեն Հայա-  
տանում առհասարակ. կեանքի ու հաղորդակցութեան  
ներկայ պայմաններում չկան գրավաճառանոցներ,  
չափազանց դժւարին է գրքերի մատակարարումը  
որպասահմանից։

Այսպիսի պայմաններում ֆակուլտէտն ու դասա-  
խոսները պէտք է հոգային և աշխատէին որևէ չա-  
փով բաւարարելու ուսանողների այդ կարիքը՝ իրենց  
ոյժերի և տեղական պայմանների սահմաններում։  
Ֆակուլտէտն ընդ առաջ քնաց դասախոսների պատ-  
րաստած կամ թարգմանուծ համալսարանական դա-  
սադրքերի շուտափոյթ հրատարակման գործին։

Անտեղի համարելով, որ ուսանողների ձեռին միայն  
իմ դասախոսածունիթը լինի (որը հրատարակուում է այս  
գրքի հետ միաժամանակ), այլ անհրաժեշտ համարելով,  
որ հարուստ հոգեբանական գրականութեանը գունէ նը-  
րագագոյն շափով ծանօթանան մեր ուսանողները՝ ես



11-241939

առաջին հերթին կանգ առայ ամերիկացի յայտնի դիմումական Զէմսի ներկայ երկի վերայ, որի հեղինակը խորամիտ ու հմուտ հոգեբան լինելով հանդերձ միենոյն ժամանակ աչքի է ընկնում որպէս առաջնակարգ շարադրող և շնորհալի գրող:

Ներկայ հրատարակութիւնը նպատակ չունէ Զէմսի «Հոգեբանութեան» լրիւ Հայերէն թարգմանութիւնը լոյս ընծայել, այլ սահմանափակում է այս առարկան աւանդելու և ուսանելու ընթացիկ կարիք ներին որոշ բաւարարութիւն տալու ծրագրով։ Այս առաջին պրակի բովանդակութիւնը (Զէմսի գրքի թարգմանւելիք գլուխների ընտրութիւնն ու հերթի) յարմարեցւած է յատկապէս ներկայ կիսամեակում աւանդւող նիւթին։ Զէմսի ամբողջ երկի քսան և վեց գլուխներից՝ միայն հնգի թարգմանութիւնն է տալիս լոյս տեսնող ներկայ առաջին պրակը։

Այս թարգմանութիւնը կատարւել է դժբախտաբար ոչ թէ անգլիերէն ընագրից, այլ ոռւսերէն թարգմանութիւնից։ Ռուսերէն երկու աարքեր թարգմանութիւններ եմ աչքի առաջ ունեցել, մէկը կապշինի, միւսը Օրոլէնսկու, այս երկու թարգմանութիւնները տեղ-տեղ բաւական տարբեր կերպով են հասկանում բնագրի իմաստը։ ըստ երեսութիւն՝ Օրոլէնսկու թարգմանութիւնը աւելի բառացի է, սակայն այդ նրան աւելի հարազատ ու փատահելի չէ դարձնում—պատահում են նախադասութիւններ ու կտորներ, ուր ակներկ են այդ թարգմանութեան որի խայները, այս կողմից շատ աւելի փստահելի է կապշինի աւելի ազատ թարգմանութիւնը։

Ներկայ հայերէն թարգմանութիւնն ու հրատարակութիւնը առնասաբակ աննպաստ պայմաններում և շտապովի կատարւած մի գործ է, այսպիսի գործերին յատուկ թերութիւններով, որոնց համար խնդրուում է ուսանողների ներողամտութիւնը։

Մեծարգոյ դօցէնտ Ստ. Մալխասեանին յայտնում եմ իմ ջերմ շնորհակալութիւնը իր կարեոր աջակցութեան համար, որի շնորհիւ այս թարգմանութիւնը ազատւեց լեզւային մի շարք թերութիւններից։

### Սիրական Ժիզրանիան

Փետրւար—Մայիս 1920

Ալէքսանդրապոլի

Իւղաքանչիւր բերող նէարդ պէրիֆէրիալի որոշ	
մասից է գալիս և զրգուում ու լարւում է ներ-	
քին գործունէութեան համար յատուկ արտա-	
քին ոյժից	37
Ուղեղի զանազան մասերի ասպէցիֆիկ էներգի-	
աները»	38
Զգայութեան տարբերութիւնն ըմբոնութիւնից	41
Զգայութիւններում իմացման ընդունակութիւն	
կայ	
Մի բանի իմացում և իմացութիւն մի բանի մա-	
սին	42
Զգայութեան տարբերութիւնը երկակայութեան ար-	
դիւնքներից	43
Զգայութեան առարկաների օրեկտիւ լինելը	44
Զգայութիւնների թափը (խոտէնսիւութիւնը)	45
Վէրէրի և ֆէխնէրի օրէնքի մասին	47
Զգայութիւնները բարդ բաներ չեն	48
Այսպէս կոչւած «յարաբերականութեան օրէնքը»	52
Կօնտրաստի ներդործութիւնը	35
	55

### ԾԱՐԺՄԱՆ ԶԳԱՅՈՒԹԻՒՆԵՐԸ

Մարմինի մակերեսի վերայ շարժւող առարկաների	
զգայութիւններ	58
Տարածութեան մէջ կատարւող շարժման զգայու-	
թիւններ	65

## ՑԱՆԿ

### ԳԻՏԱԿՅՈՒԹԵԱՆ ՑՈՐՁԱՆՔԸ

Հոգեկան կեանքի հիմնական վաստը	1
Գիտակցութեան չորս յատկութիւնը	1
Ամեն հոգեկան վիճակ կամ միտք անձնական գիտակ-	
ցութեան մաս է լինում	2
Գիտակցութեան մէջ անընդհատ փոփոխութիւններ	
են կատարւում	4
Իւրաքանչիւր անձնական գիտակցութեան մէջ մտքի	
պրօցէսը նկատելի կերպով անընդհատ է	10
Գիտակցութեան կայուն և փոփոխական վիճակները	13
Գիտակցութեան առարկան միշտ կապակցւուծ է «հո-	
գեկան օբէրտօնների» հետ	17
Մտածութեան բովանդակութիւնը	22
Մտքերի միջն միշտ որևէ բանաւոր (ռացիզմալ) յա-	
բարերութիւն է լինում	23
Գիտակցութիւնը միշտ մաքի մէկ կազմով աւելի է	
հետաքրքրւած լինում, քան միւսով, մտածման	
ամբողջ ընթացքում շարունակ որոշ ընարու-	
թիւն է անում նրա տարբերի միջն, միքանիսը	
դրանցից մերժելով և միւսները գերազանելով.	27

### ԶԳԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐԾՊՐԵՍ

Կէնտրօնաձիգ նէարդային հոսանքները ուղեղի վերայ  
ազդող միակ նօրմալ գործօններն են

36

## ԳՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՑՈՐՅԱՆՔԸ

### ԺԱՄԱՆԱԿԻ ԶԳԱՅՈՒԹԻՒՆԸ

Զգացւող ներկան որոշ տևողութիւն ունէ	69
Դատարկ ժամանակի զգայութիւն չենք ունենում	71
Աւելի երկար ժամանակամիջոցների գնահատումը	73
Անցած ժամանակի զգայութիւնը ներկայ զգայութիւն է	78

### ՅԱՇՈՂՈՒԹԻՒՆ

Յիշողութեան երեսյթի վերլուծումը	81
Մտապահումն ու մտաբերումն	84
Մտաբերումը բացաբարում է ասօցիացիայի միջոցով	84
Ասօցիացիայով բացաբարում է նույն մտապահումը	87
Բնախոսական սիէմա	88
Հաւ յիշողութեան պայմանները	90
Ինչու անմիտ սերտելը ուսանելու այնքան վատ եղանակ է	95
Մարդու բնատուր տպաւորողութիւնը անփոփոխ է	96
Յիշողութեան կատարելագործումն	100
Ճանաչումն	101
Մոռացումն	102
Հիւմնդական պայմանները	103
Կարենութիւնակներից	105

ՀՈՒՅԵԿԱՆ կելլնքի չի ՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԸ: Ներքին փորձի սկզբնական կօնկրէտ վաստը այն համոզմունքն է, թէ նրանում ի՞նչ որ գիտակցական անցքը եր (պրօցէսներ) են կատարւում: «Գիտակցութեան վիճակները» ներքին փորձում փոխականական մէկ միւսին էնքանից որ անդէմ կերպով առում ենք—«լուսանում է», «միջնում է», այնպէս էլ այդ վաստը ամենից լաւ կարող ենք բնորոշել անդէմ տրամայացութեամբ—«մտածում է», «մտածելը գալիս է»:

ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆՆ ԶՈՒՄ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ: Ի՞նչպէս են կատարում գիտակցութեան անցքերը: Դրանց մէջ չորս էական գիծ ենք նկատում, որոնցից իւրաքանչիւրը համառոտակի գննելու ենք այս գլխում:

1. Իւրաքանչիւր «գիտակցական վիճակ» ձգտում է անձնական գիտակցութեան մաս լինելու:

2. Անձնական գիտակցութեան սահմաններում իր վիճակները փոփոխական են:

3. Ամեն անձնական գիտակցութիւն զգայութիւնների մի անընդհատ յաջորդակցութիւն է հանգիստանում:

4. Կան առարկաներ, որոնք նա սիրով է ընդունում, միւսները մերժում է, առհասարակ շարունակ ընտրութիւն է անում զրանց միջի:

Գիտակցութեան այս չորս յատկութիւնը մէկը միւսի եակից ըննելիս, մենք ստիպւած կլինենք մի շարք հոգեբանական տէրմիններ գործածել որոնք ԶԷՄՍ. ՀՈՒՅԵԲԱՆՈՒԹԻՒՆ:

պրքիս միայն յետաղայ զլուկներում կարող կլինեն  
կտառքելովէս ճշլրիտ սահմանում առանալ: Սա-  
կայն հռդեքանական տէրմինների պայմանական ա-  
ռումը հանրածանօթ բան է. իսկ այս զլառում այդ  
տէրմինները մենք պարծ ենք ածելու լոկ պայմանական  
իմաստով: Ներկայ զլուխը նման է մի ուրուագծի,  
որը նկարիչն ածուխով արել է կտառի վերայ և որի  
վերայ դեռ չէ երկու նկարի ոչ մի մանրամանու-  
թիւնը:

Եթե որ ես առում եմ—«ԱՄԵՆ ՀՅԴԵԿԱՆ ՎԻ-  
ՃԱԿ» եի ԿԱՄ «ՄԻՏՔ» ԱՆՁՆԱԿԱՆ  
ԳԻԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԱՍ է ԼԻՆՈՒՄ, «անձնա-  
կան գիտակցութիւն» տէրմինը ես առում եմ ճէց  
այդպիսի սկայմանական իմաստով: Այդ տէրմինի նը-  
շանակութիւնը մեզ համար հասկանալի է քանի դեռ  
չեն ինդրել մեղանից, որ զբա ճշլրիտ բացարու-  
թիւնը տանք. ահա այդ ժամանակ բանից զուրս է  
դալիս, որ այդպիսի մի բացազբութիւն փիլիսոփա-  
յական ամենաղջւարին ինդիքներից մէկն է հանդի-  
սանում: Այդ ինդիքը մենք կքննենք «Անձնաւորու-  
թիւն» նորբւած զլառում. իսկ այժմ կ'սահմանափակ-  
ւինք մի նախազարքաստական նկատողութիւնով:

Եյս սենեակում, ասենք լսարանում, ձեր և իմ  
շատ մտքեր կան, զրանցից մի քանիսը իրար հետ  
կապակցւած են, միւսները—ոչ: Այդ մտքերի մասին  
բացարձակօրէն ասել չէ կարելի ոչ այն, թէ զրանք  
իրարից անջատ են և անկախ, ոչ էլ թէ բալորը մի-  
տիսին կապակցւած են, զրանցից և ոչ մէկը լիովն  
անջատւած, տուանձնացած չէ, այլ իւրաքանչիւրը  
մի քանի միւս մտքերի հետ կապակցւած է, իսկ մը  
նացածներից բոլորովին անկախ է: Ի մ մտքերը կա-  
պակցւած են իմ իսկ միւս մտքերի հետ, ՃԵՐ ՈՒ Ք

ՃԵՐ իսկ մտքերի հետ կայ արդէօք սենեակում  
էլի որ և է տեղում մի սոսկական միաք, որը ոչ մի  
անձի պատկանելիս չլինէք. այդ ասել չենք կարող,  
քանի որ փորձի տուեալներ շունենք: Բնութեան  
մէջ մէր հանդիպած գիտակցութիւններ են  
խելքեր, անձեր, որոշ կօնկրէտ ՇԵՆ-ԵՐ և ՇՊՈՒՔ-ԵՐ:

Սմէն մէկ անձնական գիտակցութեան մտքերը  
առանձնացած են միւսի մտքերից, զրանց միջն ոչ մի  
անմիջական փոխանակութիւն չկայ. մէկ անձնական  
գիտակցութեան ոչ մի միւտքը մէկ ուրիշ գիտակցու-  
թեան մտքի անմիջական առարկայ դառնալ չէ կա-  
րող. Գիտակցութիւնների բացարձակ առանձնացած-  
ութիւնը, միացման չենթարկող յոկնակիու-  
թիւնը (պիւրալիսմ) հոգեբանական օրէնք է: Հստ  
երեցթին՝ տարբական հոգեկան փոստ է ոչ թէ  
«միտք ն» առհասարակ, ոչ էլ «այ կամ այ ն»  
միտքը, այլ «ի մ միտքը», առհասարակ «մէ-  
կին պատկան ող միտքը»: Ոչ միաժամա-  
նակ կատարելը, ոչ տարածութեամբ մօտիկ զըտ-  
նելը, ոչ բովանդակութեան որակով նման լինելը չեն  
կարող ի մի ձուլել անձի պատնշշով իրարից զատ-  
ւած մտքերը: Այսպիսի մտքերի փոխադարձ անջատ-  
ւած լինելը բնութեան մէջ եղած ամենաբացարձակ  
սահմանագծերից մէկն է: Ամենք: կհամաձայնեն այս  
զրութեան (թէսիսի) հետ, քանի որ զրանով  
միայն այն է հաստատում, թէ «անձնական գիտակ-  
ցութեանը» համապատասխանող «ինչոր բան» դոյ-  
ութիւն ունի, առանց նոյն գիտակցութեան յետա-  
գայ յատկութիւնները մատնանշելու :

Հստ այսմ, հոգեբանութեան անմիջական տուեալ  
տ համարել կարելի է աւելի անձնական գիտա-

կցութիւնը, քան թէ միտքը: Գիտակցութեան ամենաընդհանուր փաստը այն չէ, թէ «մտքեր ու զգացմունքներ գոյութիւն ունին», այլ թէ «ես մը ստածում եմ» և կամ «ես զգացում եմ»: Աչ մի հոգեբանութիւն չի կարող ինչ էլ որ լինի ժխտել անձնական գիտակցութիւնների գոյութեան փաստը: Անձնական գիտակցութիւններ ասելով հասկանում ենք մտքերի կապակցուած յաջորդականութիւններ՝ գիտակցուած որպէս այլովիսիներ: Հոգեբանը աւելի մեծ անակցութիւն անել չի կարող, քան եթէ սկսէր բացադրել անձնական գիտակցութիւնների բնույթը՝ զրկելով զբանց անհատական արժէքը առաջնորդութիւն ի ցույցը:

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԵջ ԱՆԲՆԴԱԾԱԾ ՓՈՓՈԽԱՀԻ ԹԻՒՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐԻՈՒՄ: Սրանով ես չեմ ուզում՝ ասել, թէ գիտակցութեան և ոչ մի վիճակ տեսական չէ: Եթէ այս ճշմարիտ իսկ լիներ, զարձեալ զրա ապացուցանելը շատ գժւար կլինէր: Ասածովս ես միայն ուզում եմ ընդդեմ այն փաստը, որ գիտակցութեան՝ մէկ անդամ եղած ու անցած ոչ մի վիճակ չէ կարող նորից ծագել և առաջի կրկնել: Մենք մերթ նայում ենք, մերթ լսում, մերթ խորհրդածում, մերթ ցանկանում, մերթ մտաբերում, մերթ ակնկալում, մերթ սիրում, մերթ ստում, մեր գիտակցութիւնը փոփոխակի զբաղւած է լինում մտքի հազար տեսակ առարկաներով: Բայց թերհս ասելու լինեն, թէ չէ որ գիտակցութեան՝ այդ բոլոր բարդ վիճակները պարզագոյն վիճակների բազակրութիւններից են յօրինում, արդ՝ արդէօք սրմնք ել են նոյն փոփոխականութեան օրէնքին ենթարկւած: Օրինակ, միթէ մի առարկայից ստացւած մեր զգացութիւնները միշտ ել նոյնը չեն: Գաշնամուրի ստեղին կառ

տարելապէս մի և նոյն ուժով մի քանի անգամ իր վիելիս՝ միթէ միշտ էլ մի և նոյն ձայնը չենք ստանում: Միթէ նոյն կանաչը չէ ամեն զարուն մեր մէջ կանաչ զոյնի նոյն զգացութիւնն առաջացնում, նոյն երկինքը չէ ըլայծառ եղանակին նոյն կապայտ գոյնով մեղ ներկայանում, հոտոտելիքի նոյն տպաւորութիւնը չենք ստանում օգրիօլօնից, քանի անգամ էլ որ վորձելիս լինենք նոյն սրուակից հոտ քաշել: Այս հարցերին բացասական պատասխաննելը կարող է մէտաֆիզիկական (բնագանցագիտական) սովորութիւն երկար, և ոտկայն ուշադիր վերը լուծ ծումը չէ հաստատում, որ կետրոնածի գիշեր կուտանքները մեր մէջ երբ հիշե երկու անդամ կատարելապէս մի և նոյն զգացական տպաւորութիւնը առաջանաւ գոյն է ին:

Նոյնն է մեր ըմբռնելի տռարկան, և ոչ թէ մեր զգացութիւնները մենք մի քանի անգամ մէկը միւսի եռելից լսում ենք նոյն նօտան, տեսնում ենք նոյն որակի կանաչ զոյնք, հոտոտում ենք նոյն անուշադիր հանուշ հոտ ենք նոյն տեսակի ցաւ ենք զգում: Օրեկախւ և սուրեկտիւ գոյակները, որոնց յարատե գոյութեանը հաւատացած ենք, ըստ երկոյթին նորից ու նորից ներկայանում են մեր գիտակցութեան առաջ և ստիպում են, որ մենք, մեր անուշադրութեան չնորհիւ, ենթարկենք, իբր թէ զբանց մտախն եկած զաղափարները նոյն զաղափարներն են: «Ըմբռնութեանը» ներբւած զիխում կտեսնենք, թէ որչափ խոր է մեր մէջ արմատացած սովորութիւնը՝ առարկաները ձանաչելիս զգաւել զգայական ապաւորութիւններից իբրհ նոյն առարկա-

Ների իրական ներկայութեան ցուցիչներից, Կանաչը որին և նայում եմ պատռհանից, մի և նոյն գոյնի է ինձ երեսմ թէ արկի կողմում, թէ շւաքում. մինչդեռ նկարիչը, նոյն կանաչը կտակի վերայ պատկերացնելիս, նկարովը իրական տաղաւորութիւն տուաշացնելու համար՝ մէկ դէպքում մութ-շականակազոյն ներկի է զիմում, միւս դէպքում՝ բաց-դեղին: Առհաւարակ մենք տուանձին աշաղը ութիւն: չենք դարձնում, թէ մի և նոյն առարկաները որչափ զանազանակերպ տեսք, ծայն ու հոտ են ունենում զանազան հետաւորութիւնների վերայ և զանազան չըջապատղ պարագաներում դանւելիս: Մենք աշխատում ենք լոկի ի ը և ը ի նոյնը լինելուն համոզել, և այդ բանին մեզ հաւասարացնող զդայութիւնները, ինչպիսի էլ որ լինեն, առանց նրբութեան զնահատելով՝ իրենք էլ մեզ նոյնանման կթւան: Այս հանգամանքի չնորհիւ զանազան զդայութիւնների սուբեկտիւնոյնը լինելու վկայութիւնը ոչ մի արժէք չունի իրի ապացոյց որոշ փաստի իրական լինելու: Զգայութիւն կոչւած հողեկան երեսյթի ողջ պատճութիւնը կարող է պայծառ կերպով պատկերացնել մեր անընդունակութիւնը առելու, թէ արդէօք բոլորնին նոյնանման են, թէ աչ, առանձին տուանձին բմբոնւած մեր երկու զդայական տաղաւորութիւնները: Մեր ուշադրութիւնը գրաւողը ոչ այնքան տողաւորութեան բայց արձակն է, որքան այդ տողաւորութեան տոիթ լինելը այլ տաղաւորութիւնների միաժամանակ ծագելուն: Մուգ ֆօնի վերայ նուազ մուզ առարկան սպիտակ է թւում: Հերմիօլյը հաշւել է, որ լուսնի լուսով լուսաւորւած մարմարէ շինութիւն պատկերացնող նկարի սպիտակ մարմարը ցերեկւայ լուսին տասը կամ քան անզամ աւելի պայծառ է, քան իս-

կական լուսնի լուսով լուսաւորւած մարմարը:

Այս տեսակի տարրերութիւնը երբէք չ'ը կորող անմիջական զ պ ա յ ա ն եղանակով իմացւել, արդ կարելի է եղել որսչել միայն մի շարք կողմանիկի խորհրդածութիւններով: Այդ համապատճենքը մեղ են, թափել է առփին, որ մեր զդայական ըմբռնոցութիւնը շարունակ փոփոխում է, այսպէս որ քիչ է պատճում, որ մը և նոյն առաջիան մեր մաջ նախկին զդայութիւնը առաջացնէ: Մեր զգայողութիւնը փոփոխում է, նայած թէ արթուն ենք թէ քներս տանում է, կուշտ ենք թէ քաղցած, յօդնած ենք թէ աշխայժ, նա առրեր է ցերեկը և գիշերը, ձմեռը և ամառը, մանկութեան, հասունութեան և ծերութեան ժամանակը Սոկան և անպէս, մենք բնաւ չենք տարակուսում, որ մեր զդայութիւնները մեր առաջ միշտ մի և նոյն աշխարհն են հանդէս բերում մի և նոյն զդայական յանկութիւններով և ո՛ի և նոյն զդայական առարկաներով: Մեր զգայողութեան փոփոխականութիւնը ամենից պայծառ նկատել կարելի է դիտելիս, թէ որշափ առրեր յոյզեր են մեր մէջ առաջացնում մի և նոյն իրերը զանազան հասակում և կամ հոգու զանազան արամադրութիւններում օրգանիկ պատճառներից կախւած: Ինչ որ առաջ ծագած և յուղիչ էք թւում յանկարծ հանցած, ձանձրափ և անօդուած է դանուում: Թուշունների երգն յանկարծ սկսում է միակերպ թւալ, քամու ունոցը — տիրարի, երկնօքի ան սքը — մասը:

Այս կողմանիկի խորհրդածութիւններին, թէ մեր զդայուղութեան փոփոխականութեան պատճառով շարունակ էապէս փոփոխում են մեր զդայութիւնները, կարելի է աւելացնել նաև մի բնախօսական խորհրդածութիւն: Աւզեղում իւրաքանչիւր զդայութեանը

համապատասխանում է որոշ պրօցէս: Որպէսզի մի որոշ զգայութիւն կրկնի բացարձակ ճշգրտութեամբ, պէտք է, որ ուղեղը առաջին զգայութիւնից յետոյ բացարձակ ոչ մի փոփոխութեան չենթարկ կւի: Բայց այս վերջինը, խիստ տած, բնախօսքին անհնարին բան է: Աետեապէս տևաջւայ զգայութեան բացարձակ ճշգրիտ կրկնւելն էլ անհնարին է, որովհետեւ պէտք է ենթադրինք, որ ուղեղի ամեն մի փոփոխութեանը, որքան էլ այդ փոքր լինի, համապատասխանում է մի որոշ փոփոխութիւն զիտակցութեան մէջ, որին նոյն ուղեղը ծառայում է:

Իսկ եթէ այսչափ նեշտ է երեան հանել այն մտքի անհիմն լինելը՝ թէ պարզաբուն զգայութիւնները կարող են տնփոխի կրկնելու, առաջ էլ աւելի անհիմն պիտի մեղ երեայ այն կարծիքը, թէ նոյն անփոփոխ կրկնութիւնը նկատում է զիտակցութեան աւելի բարդ ձևերում:

Զէ որ լոյսի պէս պարզ է, որ մեր մտքի վիճակները երբէք բացարձակ նոյնանման չեն լինում: Երաքանչիւր առանձին միտք որեէ առարկայի մասին, ճիշտն տած, սուստ է և միմիայն ըստ սեսի նմանութիւն է ունենում մեր միւս մտքերի նետ նոյն առարկայի մասին: Երբ նախկին փաստերը կրկնում են, պէտք է նրանց մասին նոր ձեռվ մտածենք, նրանց վերայ ուրիշ անկիւնից նայենք, նոր կողմեր բանանք մէջ նախկինի համեմատութեամբ: Եւ այդ փաստերն իմացող միտքը միշտ մի միտք է առարկայի մասին նրան շրջապատող նոր յարաբերութիւններով հանդերձ, մի միտք, որ կապակցւած է որպէս անորոշ մանրամասնութիւններ իրեն ընթացակցող պարագաների զիտակցութեան նետ: Յանախ ինքներս ենք զարմանում, թէ ինչ տարօքինակ

փոփոխութիւն է կատարւել մեր յաջորդական հայեացներում մի և նոյն առարկայի վերայ: Զարմանում ենք, թէ ինչպէս մի ամիս առաջ այս ինչ կերպ պով կարող ենք եղել մտածելորեկ առարկայի մասին: Այդ կերպ մտածելուց աւելի հասւնացել ենք բայց թէ ինչպէս է այդ կատարել ինքներու էլ չենք իմանում: Տարէցտարի մի և նոյն երեսով մեզ բոլոր բային նոր կերպով են երեսում: Ի՞նչ որ ցնորական էր թւում, յանկարծ զանում է իրական, և ինչ որ առաջ տպաւորութիւն էր գործում, այժմ այլուս չէ զրաւում: Այն բարեկամներն, որ աշխարհումս ամենից թանգ բանն էին մեզ համար, անցեալի դժգոյն ուրատկանն են դառել կանայք, որ մեզ մի ժամանակ չնաշխարձիկ էտեներ էին թւում, ասաղերը, անտառները և ջրերը՝ ժամանակ անցած սկսեցին մեզ տաղտկալի ուռոչ բանաստեղծական երեալ մատաղանաս օրիսրգները, որոնց մի ժամանակ ինչ-որ երկնային լուսաղակով էինք զարդարում, ժամանակի ընթացքում մեր աչքում ամենասովորական երկրային արարածներ են դառնում, նկարները՝ անբովանգակ, զրբերը... բայց ո՛յթէ Գէօթէի երկերում այդքան շատ խորհրդաւոր խորութիւն կայ, արդէօք այնչափ բովանդակալից են Զօն Միլի գրւածքները, ինչպէս որ մեզ այդ թւում էր առաջ: Պակաս չափով հաճոյների տարւելով, գնալով աւելի ու աւելի ենք թաղւում առօրեայ աշխատանքի մէջ, աւելի ու աւելի ենք ներշնչւում զիտակցութեամբ, թէ որչափ կարեւը են հանրօգուտ դործը և ուրիշ հասարակական պարագանութիւնները:

Անփոփոխութիւն ունի յաղող և ժամանակ առ ժամանակ մեջ առաջանակ մեր գիտակցութեան լոյսի առաջանակ միշտ կար իւղութեան լոյսի առաջանակ նույնդէս գալող իւղէան մի մտացածքին իւղութեան պարագաների է:

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵՍՆ  
ՄԵԶ ՄՅՋԻ ՊՐՈՑԵՍԸ ՆԱՌԵԿԻ ԿԵՐՊԱՎ ԱՆՁՆԴԱ  
ՀԱՏ է: Միայն այն շաբթը ես կարող եմ անընդ ու համանել, որը ընդհատումներ և բաժանումներ չունի Գիտակցութեան մէջ միայն երկու տեսակ՝ ընդհատում կարող ենք պատկերացնել. մէկ՝ ժամանակաւոր բացեր, երբ գիտակցութիւնը բացակայում է, մէկ էլ՝ իմանալիք բովանդակութեան այն անահետան խիստ փոփոխութիւն, որ յաջորդը ոչ մի առընչութիւն չունի նախորդի հետ գիտակցութեան մէջ: «Գիտակցութիւնը անընդհատ է» թէսիր երկու միտք է պարունակում.

1. Ժամանակաւոր բացին նախորդող և յաջորդող հոգեկան վիճակները գիտակցում ենք. որպէս մի և նոյն անձնաւորութեան մասեր:

2. Գիտակցութեան բավանդակութեան որակի փոփոխութիւնները երբէջ խիստ չեն կատարում:

Նախ քննենք առաջին, աւելի պարզ պէտքը:

1. Եթզ մի և նոյն մահճակալի մերայ քննած Պետրոսն ու Պօղոսը արթնանում են և սկսում են մրատարերել անցեալը, նըանցից խըրաքանչիւրը առաջիկայ բովէն իր սեփական անցեալի հետ է կապակցում: Խնչպէս որ նողի տակ թաղւած անօդը ըորոք միջանկեալ նիւթերի վրայից անցնելով անվրէող զրոնում է իրեն համապատասխանող կատօդը, այնուու էլ Պետրոսի ներկան կուլ է հաստատում իր անցեալի հետ և երբէք սիսամամբ չի շաղկապւում Պօղոսինի հետ: Նոյնչափ քիչ է կարող սխալւել Պօղոսի գիտակցութիւնը: Պետրոսի անցեալը իրացում է միմիայն իր ներկալի կողմից: Նա կարող է կատարելապէս ճիշտ տեղիկութիւն ունենալ, թէ ինչպէս Պօղոսը նիւթեց և ապա քննեց, բայց այդ գիտա-

նալը անպայման տարբեր է իր սեփական անցեալը գիտակցելուց: Իր սեփական գիտակցութեան վիճակները Պետրոսը յիշում է, իսկ Պօղոսինները միտք ովանդ կերպ երացնում է: Ցիշելը նմանութիւն ունի անմիջապէս պատումն լիշողութեան առարկան միշտ օժտած է լինում կենդանիութեան և ընտանիութեան առնելու կատկութիւններով, որոնցից զուրկ է լինում հասարակ երեակայութեան առարկան: Պետրոսի ներկանի կենդանի է, ընտանի ու անմիջական: Խնչպէս որ ներկան իմ անձնաւորութեան մի մասն է, իմս է, այդպէս էլ ամեն ինչ որ իմ գիտակցութեան մէջ մուտք է զործում կենդանի ու անմիջական ձևով—իմս է, իմ անձնաւորութեան մասն է: Ցետաղայում կտեմնենք, թէ այդ բնչ յատկութիւններեն, որ կենդանիութիւն ու ընտանիութիւն ենք կոչում: Բայց հետո որ գիտակցութեան մի անցեալ վիճակնում, իսկոն և եթ իւրացւում է մեր ներկայի կայանում, իսկոն է կազմի մէջ է մըտկողմից և մեր անձնաւորութեան կազմի մէջ է, նույնում: Անձնաւորութեան այդ միապաղապութիւնն է, որը չէ կարող ժամանակաւոր բաց լինել և որը այդ ժամանակաւոր բացի գոյութիւնը գիտակցելով հանդիպում է այսուամենայիւ շարունակում է գիտակցել զերծ այսուամենայիւ շարունակում է գիտակցել իր անընդհատութիւնը անցեալի մի քանի մասերի նկատմամբ:

Այսպիսով գիտակցութիւնն ինքն իրեն համար միշտ ամբողջական, մասերի բաժան-բաժան չեղած մի բան է ներկայանում: Հոգեկան երկոյթների «շլթայ» կամ «շալթ» դարձւածքներին նման արտայայտութիւնները մեզ չեն տալիս գիտակցութեան մասին այն գաղափարը, որը նրանից ստանում ենք մասին ականական կերպով, գիտակցութեան մէջ չկան յօ-

դեր, նա հոնում է անընդհատ։ Ամենից բնականը կլիներ նրան յատկացնել «դեռև և կամ յործանք» փիտաքերութիւնը։ Գիտակը կը ու թե ան մասին սոսրե խօսելիս գիտակցութեան, մաքի կամ ուռեկտիւ կեանքի չը ու ձանք տէրմինն ենք ողահերու։

2. Բայց մինչև անզամ մի և նոյն պիտակցութեան սահմանում և մի և նոյն խկ անձին պատկանող մտքերի միջի որոշ կապակցութիւն և անկապութիւն կայ, որի հետ նոտորդ նկատովութիւնը ոչ մի տորնչութիւն չունի։ Այսուղի ևս նկատի ունեմ գիտակցութեան մէջ կապարող խօսա լուսութիւնները, որոնք մտքի յործանքի միմեանց յաջորդող մասերի ու ակի հօնորասաներից են առաջանում։ Եթէ հոգեկան երևյթների «շղթայ» կամ «շարք» դարձւածքները չեն յարմարում այս դէպք քին, առաջ ինչպէս բացադրել դրանց ծագումը լեզում առաջանում է Բարձր ճայթիւնը միթէ չի լաւ ժանում երկու մասի այն գիտակցութիւնը, որի վերայ ներդործում է։ Աչ, որովհետեւ որոնմունքի գիտակցութիւնը միախախանուում է նախորդագլութեան գեռ շարունակուղ գիտակցութեանը։ Հէ որ ճայթիւնի ազմուկը լսելիս՝ ոյ թէ պարզ զդուկի և ն ենք լսում, այլ մի զդուկին, որը խախտում է լսութիւնը և նրան հօնորասա (հակապատկեր)։ Ե հանդիսանում, Այդպիսի պայմաններում ծագած զդուկների մեր զգայութիւնը բոլորովին տարբեր է նոյն զրդու զիւնի տապաւութիւնից, երբ սա անջացած է լինում այլ նման աղմուկների անընդհատ շարքում։ Գիտենք, որ աղմուկն ու լսութիւնը փախաղաճաբար իրար ոչնչացնում են և վանում, խկ զդուկինի գիտակցութիւնը միաժամանակ նուև մի գիտակցութիւն է, թէ նոյն վայրկենին զագարեց լսութիւնը, և մարդու

կօնկրէտ լուական պիտակցութեան մէջ հազիւ թէ կարելի լինի գանել մի զգայութիւն այն տատիան ներկայով սահմանափակւած՝ որ ոչ մի փոքրագոյն ակնարկ չպարաւակէր թէ ինչ է իրեն նախորդել։

Գիտակցութիւն «ԿԱՅԱԽ» եւ «ՓՈՓԱԽԱՎԱՆ» ՎԻՃԱԿՆԵՐ, եթէ մի ընդհանուր հայեացք ձգենք մեր գիտակցութեան զարմանալի յարձանքի վերայ, ամենից առաջ մեզ կզարմացնէ, որ զրա հոսանքը արբեր արտգութիւնունի զանտգան մասերում։ Գիտակցութիւնը նման է թոշունի կեանքին; որը մէկ նըստում է աեղը, մէկ թոշում, և զերի բիթը նշանակել է գիտակցութեան այդ յատկութիւնը նրանով, որ ամեն մտքի տեղ է խօսքի, նախակառութեան ձե, խկ նախագառութիւնը զաբգացընէ պարբերութեան ձեւի։ Կանդման կէտերը գիտակցութեան մէջ սովորաբար զգայուկան տպաւորութիւններով են բնուած լինուեմ, որանք այն առանձնայակութիւնն ունին, որ կարող են առանց փափոխւելու անորոշ ժամանակ մտքի գիտուղութեան ենթարկել, անցման միջոցները բնուում են մաքերով այն ստատիկ և զինամիկ յարաբերութիւնների մասին, որ մեծ մասամբ հաստատում ենք յարաբերական հանգաւութեան զրութեան ժամանակ ընթանած առարկաների միջև։

Կանդման կէտերը գիտակցութեան յործանքի և կայուն մասերը անւանենք, խկ անցման միջոցները՝ «փոփոխական մասեր»։ Այն ժամանակ կուկատենք, որ մեր մտածուղութիւնը շարունակ ձգտում է հէնց նոր թողնւած մէկ կրյուն մասից զէպի միւսը, և կարելի է ասել որ զիտակցութեան անցման մասերի զիտաւոր կոչումն է մէկ հաստատուն, կայուն եղբակացութիւնից ուղղել մեզ զէպի միւսը։

**Ծան դժուար է ինքնադիտողաթեան ժամանակ**

նկատել անցման մօմէնտներն իրենց խօսեան ձեռվութէ դբանք լոկ որոշ եղբակացութեան անցնելու առարիժանուն են, ապա՝ մեր ուշազրութիւնը դբանց վերայ պահելով մինչեւ եղբակացութեան առաջ գալը՝ չէ որ հենց դբանով մինք չքացնում ենք դբանց: Քանի դեռ ապասում ենք եղբակացութեան հանդէս դարւան, նա ախտիսի ոյժ ու կայունութիւն է տալիս անցման մօմէնտներին, որ բոլորովին կանում է դբանց իր փալով: Մէկը թող փորձ անէ բանեցնել ուշազրութեան միջացով անցման մօմէնտը կէս ճանապարհին մտածման ընթացքում, նա կնամուգի, թէ սրբան զըժւար բան է ինքնաղբառողութիւնը գիտակցութեան փոփոխական վիճակների գէպքում: Միտքը թոշում է սրբնթաց, այսակէս որ համարեա թէ միշտ մեզ աւելի շուտ է եղբակացութեան հացնում, քան կարուզանում ենք բոնել նրան: Իսկ եթէ կարուզանում ենք բոնել, նա իսկոյն և եթ ձեափոխում է: Տաք ձեռքով բոնւած ձիւնի բիւրեղը իսկոյն ջրի կաթիլ է գանում, այդպէս էլ գիտակցութեան փոփոխական վիճակը ըմբռնել կամենալիս՝ նրա փոխարէն գիտակցութեան մէջ ըստ ամենայնի կայուն մի բան ենք գանում, սովորաբար որպէս այդպիսին հանդէս է գալիս մտքում արտասանւած մեր վերջին բառը վերանւած առանձին, անկախ իր ունեցած իմաստից կօնտէկստի կապակցութեան մէջ, որը բոլորովին խոյս է տալիս մեզանից: Նման գէպքերում ներքին ինքնակտողութիւն անելու փորձը բոլորովին առարգիւն է լինում, նոյնն է թէ նոյն ձեռքերով բոնենք նրա շարժումը որսալու համար, կամ արագ ծածկենք գաղի լամպը նկատելու համար, թէ ինչպէս են երեւում իրերը մթութեան մէջ: Պահանջել, որ ցոյշ տըւին գիտակցութեան այդ անցման վի-

ձակները, որ հոգերաններից ոմանք անշուշտ անելու են այսպիսի վիճակների զոյցութիւնը հաստատող ներից, նոյնչափ անհիմն է, որքան սնհիմն էր Ձէնօնի բերած աղջացոյցը շարժման իրական լինելը պաշտպանողների գէմ: Ձէնօնը պահանջում էր, որ սրանք իրեն ցոյց տան, թէ որտեղ է հանդ չում նետն իր թոփչքի ժամանակ, և այդպիսի անհեղեղ հարցին արագ պատասխանելու սրանց անընդունակութիւնից եղբակացնում էր թէ անհիմն է որանց հիմնական թէսիօք:

Ինքնաղբառողութեան հետ կապւած զժւարութիւնները շատ ցաւալի հետևանքներ են տաղիս: Եթէ գիտակցութեամբ յործանքի անցման մօմէնտների զիտելը և ուշազրութեամբ միջոցով սկսելը այդպիսի զըժւարութիւններ ունի, ապա ուրեմն պէտք է հնիթապքել որ փիլիոփայական բոլոր ուղղութիւնների մեծ մոլորութիւններ ծագել է մէկ կողմից գիտակցութեան փոփոխական վիճակները սկսուիլու անհսարինութիւնից, միւս կողմից գիտակցութեան աւելի կայուն վիճակների նշանակութիւնը անտեղի չափազանցացնելուց: Պատմովանօրէն այդ մոլորութիւնը երկու ձևով է երկան եկեր Մտածողներից ոմանց դա գէպի սէն սուալի սմէտ է տարել: Սէնսուալիստները զգում էին, որ անկարող են զգայական աշխարհի երեսիների միջի եղած կապակցութեան յարաքերութիւնների ու ձեռերի անթիւ բազմութեանը համառատափանող կայուն զգայութիւններ գտնել: Այդ յարաքերութիւնների միջի էլ նրանք չէին գտնում որոշ անւանագրութեան թէ եան ենթարկելով հոգեկան վիճակների արտացըլում: և սկսում էին մեծ մասամբ ժխտել նման թէսիմների ամեն մի իրականութիւնն առհասարակ, շատերը նըանցից, օր, չիւմը յարաքե-

բութիւնների մեծ մասի իրական լինելու կատարեալ ժիշտմանն հասան թէ զիտակցութիւնից դուրսը, թէ ներսը: Պարզ «կոքաներ»—զգայութիւններ և սըրանց վերաբաղրութիւններ, տեղաւորւած մէկը միւսի ետեից, ինչպէս գօմինօի քարերը, առանց որսէ իրական կտակցութեան իրաք միջն—ահա թէ ինչ է ողջ հոգեկան կեանքի յօրինածքը այս ուղղութեան տեսակետից. մնացած բոլորը—լոկ բառացին մոլորութիւններ են: Ին աէլ է կտուալիս աւան էլ միւս կողմից՝ անկարող լինելով ժիտել մեր զիտակցութեան շրջանից գուրս զգայութիւն ունեցող յարաբերութիւնների իրական լինելը, բայց և միաժամանակ հնարաւորութիւն չունենալով որևէ կայուն զգայութիւններ ցոյց տալ, որոնց մէջ երեսն զար այդ իրականութիւնը, նոյնպէս յանգեցին նման զգայութիւնների ժխտմանը: Սակայն զրանից ինտէլեկտուալիստները ուղղակի հակառակ եզրակացութիւն արին: Սրանց ասելով, այդ յարաբերութիւնները պէտք է իմացւեն մի այնպիսի բանի միջոցով, որը ոչ զգայութիւն է, ոչ էլ որևէ հոգեկան «զիճակ» է՝ զիտակցութեան ոււրեկտիւ տարրերին նման մեր հոգեկան կեանքը կազմող և պրանց հետ մի միապազար ամբողջութիւն յօրինող: Դրանք պէտք է իմացւեն մի բուրովին այս շրջանում գտնեալ բանի միջոցով, գուտ մտքի գործ առն ութեամբ (ակտով), ինտէլեկտով կամ հանականութեամբ, որոնք զիտատառով են զբւում: և մեր զգայողութեան ամեն տեսակ փոփոխական երեսյները անչափ գերազանցող մի բան պիտի նշանակեն:

Մեր տեսակետով սխալում են թէ ինտէլեկտուալիստները, թէ սէնսուալիստները: Եթէ աւատաբակ գոյութիւն ունեն այնպիսի երեսյներ, ինչ-

պիսի որ են զգայութիւնները, ապա՝ որչափ որ անտարակուսելի է ասարկանների միջն իրական յարաբերութիւնների գոյութիւն ունենալը, նոյնչափ, և զեռ էլ աւելի, անտարակուսելի է, որ կանզգայութիւններ, որոնցով այդ յարաբերութիւնները իմացւում են: Զկայ մի շաղկապ, մի նախորդիր, մի մակրայ, մի շարահիւման ձև է կամ ձայնի փոփոխութիւն մարդկային խօսքում, որոնք արտայացելիս չլինեին նոյն վայրկեանին՝ իրապէս զգացւաղ յարաբերութեան այս կամ այն ձևափոխութիւնը կամ փոփոխութիւնը:

Օքեկտիւօրէն ասած՝ մեր առաջ իրական յարաբերութիւններ են բացւում: սուբէկտիւօրէն ասած՝ այդ յարաբերութիւնները մեր զիտակցութեան յորձանքն է հաստատում՝ զբանցից իւրաքանչիւրին իր ուրոյն ներքին որակը տալով: Երկու գէպքումն էլ յարաբերութիւնների թիւը անսուման մեծ է, և աշխարհումն չկայ մի լեզու, որը կարողանար արտայացել զրանց բոլոր հնարաւոր ձևափոխութիւնները:

Ինչպէս որ խօսում են կամ ցը տի զգայութեան մասին, այնպէս էլ իրաւոնք ունենք խօսալ «եւ»-ի զգայութեան, «եթէ»-ի զգայութեան, «ըայց»-ի զգայութեան և այլի չոց ովց-ի զգայութեան մասին: Եւ սակայն այդ չենք անում: մեր մէջ այնչափ է արմատացած միայն զոյականների զայութիւն ունենալը ընդունելու սովորութիւնը, որ մեր լեզուն բոլորովին հրաժարւում է միւս մասնբանիները գոյականացնելուց:

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԿԱՆ, ՄԻՇՏ ԿԱՊԱԿՑԻԱԾ է «ՀՈԳԵԿԱՆ ՕԲԵՐՏՈՆՆԵՐԻ» ՀԵՏ: Գիտակցութեան մէջ անւանագրութեան չենթարկող ուրիշ փոփոխութիւններ ել կամ զիտակցութեան անցման վիճակութեանը:



ձակների չափ կարեոր և նոյնպէս բոլորովին գիտակը ցական։ Օրինակներով ամենից հեշտ կիմնի հառկանարք, թէ այստեղ ես ինչ ունեմ ի նկատի։

Դիցուք, երեք հոգի իրար ետելց կանչեցին մեզ — «Սպանէք», «Հանէք», «Եա, Էք»։ Մեր գիտակցութիւնն այս դէպքում պատառութեան երեք բոլորովին տարբեր գիճակների է ենթարկւում, թէպէտե երեք կանչեց և ոչ մէկում իր առաջը ոչ մի որոշ առարկայ չկայ։ Ամենայն հաւանականութեամբ, ոչ ոք չի ժխտի, որ այս դէպքում իր մէջ մի ուրոյն հոգեկան վիճակ է լինում, առաջանալիք պատարութեան ենթադրելի ուղղութեան մի զգայութիւն, թէև այդ պատարութեան հանդէս գալու եռչ մի նշան դեռ չէ յայտնել։ Սյդպիսի հոգեկան վիճակների համար ուրիշ անուն չունենք, բայց՝ «սպասիր», «տես», «ըլլուիր»։

Երեակայեցէք, թէ մի մոռացւած անուն էք մըտարերում։ Սյդ մտարերումը գիտակցութեան մի ուրոյն պրօցէս է։ Նրա մէջ ասես թէ ինչոր բացի, պակասի զգայութիւն կայ, բայց այդ բացը իսկա ինտեսիւ է զգացւում։ Մեր առաջ ասես թէ մոռացւած անունն ակնարկող մի բան է հանդէս դալիս, որը քաշում է մեզ որոշ ուղղութեամբ՝ ստիպելով, որ անզօրութեան անախորժ զգացմանը ունենանք, և հարկադրելով, որ վերջ ի վերջոյ ձեռք վերցնենք մտահան եղած անունը մտարերելու ջանքերից։ Եթէ մեր առաջը ոշապատշաճ անուններ են բերում, աշխատելով իսկականը մեր միտքը պցել, ապա այդ բացի ուրոյն զգայութեան օգնութեամբ իսկոյն մերժում ենք զրանց։ Սյդ բերած անունները չեն համապատասխանում բայց բնոյթին։ Եւ մէկ մոռացւած բայց մի ուրիշ բառի բայցին չէ նմանում, չը

նայած որ երկու բայցն էլ կարող ենք քնորոշել լոկ որպէս բովանդակութեան կատարեալ բացակայութիւն։ Իմ գիտակցութեան մէջ երկու բոլորովին տարբեր պրօցէս է կատարւում երբ ես իզուր ջանք եմ դործ դնում մտարերելու Սպալդինգի կամ Բառալի անունը։ Իւրաքանչիւր մտարերելիք բառի համար պականիւր առանձին դէպքում տարբեր է լինում, թէկուզ և առանձին անուն չի ունենում։ Պակասի կամ բացի զգայութիւնը լիտին տարբեր է զգայութեան պականիւր կամ բացակայելուց։ այդ մի բառ ամենայնի ինտենսիւ զգայութիւն է։ Կարող ենք մտապահած լինել մոռացւած բառի ովհմը առանց նոյն բառը կազմող հնչիւնների, և կամ մի բան, որը լիշեցնում է բառի առաջին տառը, առաջին վանկը, բայց ողջ բառը չէ յարուցանում յիշողութեան մէջ։ Ամենքին ծանօթ է մոռացւած ստանաւորի գատարկ չափի անդուր զգայութիւնը, երբ, չսայած մտարերելու մեր բոլոր զիգերին, չափը չի լցում ստանաւորի բառերով։

Ինչ է որ և է բան համականարու առաջին ցոլքը, երբ, ինչպէս ասում են, խելամուտ ենք լինում խօսքի իմաստը։ Ամենայն հաւանականութեամբ, այդ մի բոլորովին ինքնատիպար զգայութիւն է։ Իսկ միթէ ընթերցողը երբէք ինքն իրեն հարց չէ տես, թէ ինչ տեսակ պիտի լինի այն հոգեկան վիճակը, որն ունենում են մի բան ասելու մտադրւելիս։ Սյդ մի բոլորովին որոշ մտապրութիւն է, բայց միւսներէց տարբեր, գիտակցութեան մի կատարելական ուրոյն վիճակ է, և սակայն արդեօք շատ կան գրա մէջ որոշ զգայական պատկերներ կան գրա մէջ որոշ զգայական պատկերների գրեթէ և ոչ մէկը։ Սպասերակերի և առարկաների։ Գրեթէ և ոչ մէկը։ Սպասերէք մի փոքր, և գիտակցութեան առաջ բառեր ու

պատկերներ հանդէս կդան, բայց կանխական մտադրութիւնն արդէն կչքանայ: Իսկ երբ որ մտածութեան սկզբնական արտայայտման համար բառեր են սկզբում երեան գալ, միտքը ընտրում է պատշաճաւորները, մերժելով անհամապատասխանները: Գիտակցութեան այդ կանխական վիճակին միայն ևայս և այս ինչ բանն ասելու մտադրութեան մտավունքը, որ հոգեկան կեանքի լրիւ երկու երկրորդը մըտքերի հէնց այդպիսի կանխական ուրուազներից է բաղկացած, որոնք բառերի ձև չեն ստացած: Ի՞նչպէս բացադրել այն փաստը, որ, առաջին անդամ մի զիրք ձայնով կարդալիս, մարդ կարողանում է իր ընթերցանութեանը արտասանութեան ճիշտ արտայայտութիւն տալ, եթէ չընդունենք, որ առաջին նախադասութիւնը կարդալիս՝ նա արդէն մի աղօտ պտակեր է ստանում երկրորդ նախադասութեան դէթ ձեի մասին, որը ձուլում է տւեալ նախադասութեան իմաստի գիտակցութեանը և կարդացողի գիտակցութեան մէջ փոխում է նոյն նախադասութեան՝ արտայայտութիւնը, ստիպելով որ արտասանելիս իր ձայնին պատշաճ իմաստ տայ: Այդ տեսակ արտայայտութիւնը գրեթէ միշտ լիովին կախւած է քերականական շարադասութիւնից (կօնստրուկցիոյից): Երբ կարդում ենք—«ոչ աւելի», ապա սպասում ենք «քան»-ի, եթէ կարդում ենք—«թէպէտ», զիտենք, որ յետոյ գալու է «բայց»-ը, «սակայն»-ը, «բայց և այն» պէս»-ը: Բառական կամ շարահիւսական (սինտաքսիոի) ձեի մերձեցման նախազգայութիւնը գործնականում այնչափ անվրէպ է, որ որոշ զբքում ոչ մի միաք չհամկացող ընթերցողը կարողանում է կարդալ նոյն գիրքը վերին աստիճանի արտայայտիչ ու մտացի ձայնով:

Ծնթերցողս իսկոյն կտեսնի, որ ես զլիսաւորացէս ձգտում եմ, որպէսզի հոգեբանները յատուկ ուշ շաղբութիւն դարձնեն զիտակցութեան հչպայծառ և ոչ-մեկին երևոյթների վերայ, ըստ արժանւոյն կնահանակն զրանց գերը մարդու հոգեկան կեանքում: Գալտօնն ու պրօֆ. Հիւքսին, ինչպէս կտեսնենք «Պատկերացման» նւիրւած զիտում, մի քանի փորձ արին Հիւմի և Բէրկլիի ծիծաղաւրժ տեսութիւնը հերքելու համար, իբր թէ առարկանների միայն կատարելապէս որոշ պատկերներ կարող ենք զիտակցել: Միւս փորձը նոյն ուղղութեամբ մեր արածն է, եթէ միայն աջողեցինը ցոյց տալ, որ անհիմն է այն ոչպակաս պարզամիտ կարծիքը, իբր թէ «զիտակցութեան վիճակներից» իմանում ենք առարկանների միայն պարզ օրեկտիւ յատկութիւնները, և ոչ յարաբերութիւնները: Բայց այդ բոլոր փորձերը բաւարար չափով արմատական չեն: Պէտք է ընդունենք, որ աւանդական հոգեբանութեան որոշ պատկերները մեր հոգեկան կեանքի միայն փոքրավոյն մասն են: Աւանդական հոգեբանները այսպէս են դատում, ինչպէս այն մարդը, որը կանոնէր, թէ զեալ բաղկացած է ջրի կարասներից, դոյլերից, կվարտներից, զդալներից և ուրիշ որոշ չափերից: Եթէ կարասներն ու զոյմերն իրօք բնմէին գետը, զարձեալ դրանց միջն պատ ջրի մի զանգւած կհոսար: Հէնց այդ պատ, ամանների մէջ չպարփակւած ջուրն է, որ հոգեբանները յամառ անտեսում են մեր զիտակցութիւնը վերլուծելիս: Մեր զիտակցութեան մէջ խրաքանչիւր որոշ պատկեր իր շուրջը հոսող ապատ «ջրի» զանգւածի մէջ է ընկղմւած և հանգչում-սահում է զրանում: Նրա հետ կապակցւած է թէ՛ մօսիկ, թէ՛ հեռաւոր բոլոր շրջակայ յարաբերութիւնների գի-

տակցութիւնը, այն շարժառիթների մարող արձագանքը, որոնց հետևանքով այդ պատկերը ծագել է, այս սաղմաւորուող գիտակցութիւնը այն արդիւնքների, որ ինքն է առաջացնելու։ Պատկերի նշանակութիւնը, արժեքը լիովին կախւած է հէնց այդ լրացումներից, մաքի դրան շրջակայ և ընթանակից տարրերի միզախառն շրջապատից, կտմ, աւելի լաւ է առել, այդ միզախառն շրջապատը տուեալ պատկերի հետ մի ամբողջութիւն է կազմում. այդ սրա ռոսկը յուկերաց և մարմին ի մարմոյցն է. ճիշտ է, նոյն ինքն պատկերը գա թողնում է այնպէս, ինչպէս որ նա առաջ էր, միայն թէ հաղորդում է նրան նոր նշանակութիւն և թարմ երանդ։

Այդ յարաբերութիւնների գիտակցութիւնը, որը մանրամասնութիւնների ձեռվ ընթացակցում է տուեալ պատկերին, անւանենք «հոգեկան օբէրտօններ»։

ՄՏԱԾՈՒԹԵԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ, ի մաց ման գործառնութիւնը (ֆունկցիան) մեր գիտակցութեան գանազան վիճակներում վերլուծելով, հեշտութեամբ կարող ենք համոզւել, որ առարկային մակերեսորէն «ծանօթ լինելու» և առարկան «փանալու» տարրերութիւնը գրեթէ լիովին նոյնանում է հոգեկան օբէրտօնների ներկայ կամ բացակայ լինելուն։ Առարկան իմանալը՝ այլ առարկաների հետ նրա ունեցած յարաբերութիւններն իմանան է։ Առարկային թուցիկ կերպով ծանօթանալը՝ նրանից հասարակ տպաւորութիւն ըմբռնեխն է։ Այլ առարկաների հետ տուեալ առարկայի ունեցած յարաբերութիւնների մեծ մասը միայն նրանով ենք իմանում, որ հոգեկան օբէրտօնների օգնութեամբ գաղափարների միջև մի ոչ-մեկին

կցորդակցութիւն ենք հաստատում։ Կցորդակցութեան այդ զդայութեան մասին, որը գիտակցութեան յորձանքի ամենահետաքրքրական տուժնեայատկութիւններից մեկն է, ես էլի մի քանի խօսք կատեմ, նախքան ուրիշ հարցերի վերլուծման անցնելլ։

ՄՏԱԾՈՒԹԵԱՆ ԲԻՇՏ ԱՅ ԵԿ ԲԱՆԱԿՈՒՐ (ՌԱՑԻՕՆԱԼ) ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ Է ԼԻՆՈՒՄ։ Մեր մտքի բոլոր կամածին պրօցեսներում միշտ մի որոշ բնաբան (թէմա) կում գաղափար (իդէա) է լինում, որի շուրջն են դառնում մտքի բոլոր մնացած մանրամասնութիւնները (հոգեկան օբէրտօնների ձևով)։ Այս մանրամասնութիւնների մէջ միշտ զգալի են լինում որոշ պարնչութիւն գէպի զիստար միտքը, սրա հետ կապակցւած հետաքրքրութիւն և մանաւանդ համաձայնութեան և տարածայնութեան յարաբերութիւն՝ նայած թէ այդ մանրամասնութիւններն աջակցում են զիստար միտքը զարգացնելուն, թէ արգելք են լինում։ Ամեն մասնութիւն, որի մանրամասնութիւններն իրենց որակով կատարելապէս համաձայնում են հիմնական գաղափարներն, կարող է որոշ թէմայի աջող զարգացնեմ համարել Մտքի մի առարկայ, որպէսզի կատողակայ մեր գաղափարների շարքում իրեն համապատասխան տեղ բռնել, բաւական է որ տեղ բռնի շարաբերութիւնների այն սքէմայի մէջ, որին որ վերաբերում է մեր գիտակցութեան նաև ափակուդ գաղափարը։

Հիմնական թէման մեր գիտակցութեան մէջ մըտքով զարգացնել կարող ենք զիստարապէս բասերի, տեսանելիքի և այլ մտապատկերների միջոցով։ Հիմնական մտքի աջրդ զարգացման համար այդ համապատանքը ազդեցութիւն շունի։ Եթէ զգում ենք, որ աէրմինների մէջ մտքի մանրամասնութիւնները կը-

ցորդակից են թէ հիմնական թէմային և թէ իրար միջն, և եթէ գիտակցում ենք եզրակացութեան մօտենալը, ապա զգում ենք, որ միտքը կանոնաւոր և տրամաբանորէն է զարգանում: Ամեն լեզուում որոշ բառեր՝ մորի մանրամասնութիւնների հետ նմանութեամբ կամ կօնտրաստով յաճախ զուգորդելուց իրար հետ և որոշ եզրակացութեան հետ սերտորէն կապակցւած են լինում, այսպէս որ մտքի բառուկան պրօցէսը ընթանում է ճիշտ զուգահեռաբար համապատասխան հոգեկան պրօցէսներին տեսազական, լողական և այլ մտապատկերների ձևով: Հոգեկան այս պրօցէսներում ամենակարեւոր տարրը մտքի ներդաշնակութեան կամ ներհակութան, ճիշտ կամ սխալ ուղղութեան պարզ զգայութիւնն է:

Եթէ ազատ տիրում ենք անզիւերէնին և ֆրանսերէնին, և սկսում ենք ֆրանսերէն խօսել, առա մրտածման յետագայ ընթացքում մեր միտքը ֆրանսերէն բառեր կզան, և զրէթէ երբէք այդ միջոցին չի պատահի, որ շեղենք-անցնենք անզիւերէնի: Եւ ֆրանսերէն բառերի իրար հետ ունեցած այդ կցորդակցութիւնը անզիւտակից, մերենական եզրակով կատարող մի բան չէ՝ նման բնախօսական հասարակ պրօցէսի. մտածման պրօցէսի ժամանակ այդ կցորդակցութիւնը զիտակցում ենք: Ֆրանսերէնի հասկացողութիւնն այնքան չենք կորցնում, որ չզիտակցենք այդ լեզուն կազմող բառերի լեզուական կցորդակցութիւնը: Ֆրանսերէնի հնչիւնների միջոցին ձեր ուշադրութեանը զարմանք է պատճառում անզիւերէն բառի յանկարծակի մէջ բերելը: Լուսող հնչիւնները հասկանալու նւազագոյն աստիճանը՝ դրանց մի որոշ լեզուի պատկանելու զիտակցեն է, եթէ միայն տոհասրակ զիտակցում ենք այդ հնչիւնները: Սովորա-

բար, երբ ակօտ զիտակցում ենք, որ մեր բակլի բալոր բառերը պատկանում են մի հնոյն լեզուին և նոյն լեզուի որոշ մասնագիտական բառարանին, և որ այդ գէնքը քում քերականական բոլոր համաձայնութիւնները ամենայն ճշառաթեամբ պահւած են, դորձնականում այդ նշանակում է, թէ ընդունում ենք, որ մեր լըսածը որոշ լիտատ ունի: Բայց, եթէ լուսող խօսքի մէջ յանկարծ մի անծանօթ այլաղփի բառ է մէջ բերում, եթէ խօսքի մէջ մի սխալ է լուսում կամ փիլիտափայական խորհրդածութիւնների շարքում յանկարծ որևէ փողոցային տիմար գարձւածք է պատահում, անպատշաճութիւնից առաջացած անհամաձայնութեան դգայութիւն ենք ստանում, և խօսքի ընդհանուր ոճի նկատմամբ մեր ունեցած կիսագիտակից համաձայնութիւնը խսկոյն չքանում է: Այսպիսի դէպքերում խօսքի բանաւոր լինելու զիտակցութիւնը աւելի բացասական, քան զրական ձևով է արտայայտում, այսինքն պարզապէս նրանով, որ բացակայում է մտքի տարրերի միջն անհամաձայնութիւն լինելու զգայութիւնը:

Ընդհակառակը, եթէ բառերը մի և նոյն բառարանին են պատկանում, խսկ քերականական շարադառութիւնը (կօնստրուկցիոյ) խսախ պահւած է, ապա իմաստից բացարձակօրէն զուրկի նախագասութիւնները երեմն կարողանում են խմասաւոր գատողութիւնների տեղ անցնել: և ուղղել առանց բնաւանախորժ զիտակցու մեր լսորութեանը: Անփմաստ նախադառութիւնների միշտ մի և նոյն յերիւրումներն հանդիսացող ճասախօսութիւննեղը ազօթամաններում, այլ և առղին մի զրօշ սացող լագրական զըշակների փրուն ճարտասանութիւնը այդ փաստի պայծառ պատկերաւոր օրինակներ կարող նն լինել: «Թոշտան-

ները լցրել էին ծառերի գագաթները առաւօտևայ իրենց երգով, օդը խոնաւ, զով ու հաճելի դարձը նելով, ահա մի նախադասութիւն, որը ես կարդացել եմ մէկ անգամ Զէռում—Պարկում տեղի ունեցած ըմբշական մըցահանդէսի տեղեկագրում։ Պարզ է, որ լրատու-աշխատակիցը այդ պրել է շտապովի, իսկ շատ ընթերցողներ կարդացել են առանց իմաստին խելամուտ լինելու։

Այսպէս տեսնում ենք, որ բոլոր այդ դէպքերում մեր խօսքի բուն բովանդակութիւնը, մեր միտքը կադմող մտապատկերների ըստ որակի ընութը, շատ քիչ նշանակութիւն ունի. կարելի է նոյն իսկ առել, թէ իսկի նշանակութիւն չունի։ Մի և նոյն ժամանակ ըստ ներքին բովանդակութեան կամքամիջնորդը—մտքի հիմնական նախադրեալներն ու եղբացութիւնները։ Մաքի մասցած ոմբողջ յործանքում գլխաւոր դերը վերապահած է խօսքի տարրերի կրցորդակցութեան զգայութեանը, իսկ դրանց բուն բովանդակութիւնը գրէթէ ոչ մի նշանակութիւն չէ ունենում։ Յարաքերութիւնների այդ զգայութիւնները, տուեալ մտքի աէրմիջներին ընթացակցող հոգեկան օքէրտօնները, կարող են բազմատեսակ մտապատկերներով արտայայտել. Այս պիազրամայի վերայ ամենից գիւրին է տէսնելը, թէ ինչպէս զանազան կերպի հոգեկան պրօցէսներ հաւասարապէս մի և նոյն նպատակին են տանում։ Թող Ա-ն լինի արտաքին փորձից ստացւած որ և է տպաւորութիւն, որը մի քանի հոգու մտածման համար ելալէտ է հանդիսանում։ Թող Հ-ն լի-



ըերում-հասցնում է տուեալ փորձը։ Եյդ անձերից մէկը եղբակացութեանը կ'համնի մէկ դժով, միւսը՝ մի այլ դժով. մտածման այդ պրօցէսի ընթացքում մէկը կ'օգտուի անդիլերէնի բառական նշաններով, միւսը՝ գերմաններէնի. մէկ պիտակցութեան մէջ կը գերիշխն անսանելիքի մտապատկերները, միւսին մէջ—շշափելիքի. մէկ մտքի աարքերը կդունաւոր մին յաւզմունքով, միւսինը՝ ոչ, ումանց մտքի պրօցէսը կ'հասարաւի միանդամից, աբաղ ու սինթէթիկ կերպով, միւսներինը՝ դանդաղ և մի քանի անդամից։ Բայց երբ որ այդ անձերից իւրաքանչիւրի մտքի նախավերջին տարրը բերում-հասցնում է զրանց մի և նոյն ընդհանուր եղբակացութեան, ասում ենք, և բոլորովին ճիշտ ենք ասում, թէ այդ բոլոր անձերն իսկապէս մի և նոյն բանն են մտածելիս եղել։ Գըրանցից իւրաքանչիւրը չափազանց կզարմանար, եթէ նոյն եղբակացութեանը նախորդող ուրիշի հոգեկան պրօցէսին մտիկ տար և տեսնէր նոյն պրօցէսում մտքի բալորովին այլ տարրեր։

Հոգեկան պրօցէսների չորրորդ առանձնայատկութիւնը, որի վերայ աէտաք է մեր ուշադրութիւնը գարձնենք պիտակցութեան յործանքի սկզբնական մակերեսային նկարագրութիւնն անելիս՝ հետևեան է. ԳիՏՍԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻԾ ԾՏՔԻ ՄԵԿ ԿՈՂՄՈՎ, ԱԻԵԼԻ և ՀԵՏԱՐՔՐԻՒԾ ԼԻՆՈՒՄ, ՔԱՆ ՄԻՒՄՈՎ, ՄՏԱԾՄԱՆ ԱՄԲՈՂՋ ԸՆԹԱՑՑՈՒՄ ՇԱՐՈՒՆՈՒ ՌՈՇ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Ե ԱՆՈՒՄ ՆՐԱ ՏԱՐԵՐԻ ՄԻՉԵ ՄԵՐ ՔԱՆԻ ԵՐԱԿԱՆ ՄԵՐ ՄԵՐ ԵՐԱԿԱՆ ԳԵՐԱԴԱՍԵԼՈՎ։

Այս ընտրողական գործունէութեան պայծառ օրինակներ կարող են ծառայել ընարսղ ուշադրութեան և խորհրդածութեան երկոյթները։ Բայց քէրն

Են մեզանից գիտակցում թէ որքան անընդհատ է ուշադրութեան դործունէութիւնը հոգեկան պրօցէսներում, որոնց հետ սովորաբար չեն կատում այդ գաղափարը: Բոլորովին անհնարին ենք համարում հաւասար բաշխել մեր ուշադրութիւնը՝ մի քանի տրպաւորութիւնների միջև: Հսողական բախումների միորինակ յաջորդականութիւնը մէկ այս, մէկ այն տեսակի սիթմիկ պարբերութիւնների է բաժանուում, նայած թէ որ հնչիւնները մաքով կշեշտենք: Այդ սիթմերից ամենապարզը կրկնակին է, օր., ափկ-տակի, տիկ-տակի, ափկ-տակի: Մակերհայթի վերայ ցաք ու ցրիւ բծերը ըմբանութեան դէպօւմ մաքով համախմբում ենք շարքերի ու խմբերի: Գծերը համակըցում են ձևերի: «Այստեղ»-ի և «այստեղ»-ի, «այս»-ի և «այն»-ի, «այժմ»-ի և «այն ժամանակ»-ի տարրերութիւնների ընդհանրական ընոյթը արդիւնք է այն փաստի, որ տարածութեան և ժամանակի մէկ այս, մէկ միւս մասերի վերայ ենք ուղղում մեր ուշադրութիւնը:

Բայց մենք ոչ միայն որոշակի շեշտում ենք ըմբանութեան մի քանի տարբերը, այլ սրանցից մի քանիսը համախմբում ենք ի միասին, միւսները գատում ենք: Սովորաբար մեր առաջ դանւած առարկաների մեծ մասը անուշադիր ենք թողնում: Կր փորձեմ համառօտակի բացադրել, թէ այդ ինչպէս է կատարուում:

Վերլուծումն սկսենք հոգեկան աշխարհի ամենասուրին ձևերից: Ինչ բան են մեր զգայարանները, եթէ ոչ ընտրութեան դործարաններ, օրդաններ (տես, «Զգայութեան մասին ընդհանրապէս դուխը»): Բը նադէանների առածով՝ արտաքին աշխարհը կաղմազ շարժումների անվերջ քառոսիցը, իւրաքանչիւր զգայա-

բանը ընտրում-զատում և ըմբռնում է միայն այն շարժումները, որոնց տատանուումը արտզութեան որոշ սահմաններում է կատարուում: Տուեալ զգայարանը հոգեղդում է այդ շարժումներին, անուշադիր թողնելով մնացածները, ասկս թէ որանք ընտեղյութիւն չունենային, Ֆիզիքական աշխարհն ըստ ինքեան մի անկարգ, խառն ի խուռն ու անորոշելի միապատճ ամբողջութիւնը է հանդիսանուում, զարկ որևէ է երանդաւորութիւնից և զանազանակերպութիւնից մեր զգայարանները, արձադանուք տալով մէկ տեսակի, շարժումներին և չարուի միւսներին, մի աշխարհն են ստեղծագործել որը լի է կօնտրաստներով, կարուկ շեշտերով, յանկարծակի վոփոխութիւններով և լոյսի ու ստերի սղատկերաւոր յերիւրումներով: Եթէ մեր զգայարանի միջոցով ստացւող զգայութիւնները պայմանաւորւած են նոյն օրգանի ծայրի աղաքատի և արտաքին միջավայրի որոշ փոխյարարելութեամբ, աղաք միւս կողմից էլ մեր ուշադրութիւնը ըստու այդ զգայութիւններից ընտրում է միայն մի քանիսը, առաւելապէս հետաքրքրաշարժները, մի կողմ թողնելով մնացածները: Միայն այն զգայութիւններն ենք նկատում, որոնք որպէս նշան են ծառայում զործնական կամ զեղարւեսական տեսակէտից մեր ուշադրութեանը արժանի առարկաների համար, այդպիսինները «զգայականների» առանձին անուն են ստանում և այդ պատճառով պատիւ ու անկախութեան յատուկ աստիճանով են օժաւում: Առկայն առարկային մեղնից յատկացւելիք առանձին հետաքրքրութիւնից զատկանելի է տուել որ քամի եղած օրը փոշու մի ափւն ըոլորովին նոյն չափ մի անհատական իր է հանդիսանուում և նոյն չափ արժանի է առանձին անունի, ինչ որ և իմ սեփական մաքմինը:

Իոկ ինչ է կատարւում այսուհետեւ իւրաքանչյուր  
առանձին առարկայից մեր ըմբոնած զգայութիւնների  
հետ։ Դրանց միջեւ խելքը նորից ընտրութիւն է ա-  
նում։ Արոշ զգայութիւններ նա ընտրում է որպէս  
այնպիսի գծեր, որոնք ճիշտ են ընդուղում տու-  
եալ առարկան։ Միւսների վերայ նայում է որպէս  
առարկայի պատահական, տուեալ ըովէի հանգամանք-  
ներից պայմանաւորւած։ յատկութիւնների վերայ։  
Սյազէս, օր., սեղանիս երեսը քառանկիւնի կոչ-  
ելը համեմատ է մէկին այն անթիւ տպաւորութիւն-  
ներից, որոնք նա զործում է ցանցաթաղանթի վերայ՝  
երկու սուր ու երկու բութ անկիւնների զգայութիւն  
առաջնելով։ բայց այս բոլոր տպաւորութիւնները  
ևս սեղանի պէրսոպէկտիվի տեսքեր եմ կոչում, իսկ  
չոք ուղիղ անկիւնները սեղանի իսկական ձևն եմ  
համարում։ ուղղանկիւնն ձեւ սեղանի էական յատկա-  
նիչը նկատելով մի քանի սեփական պեղադիական  
հիմունքներով։ Նմանապէս շրջանի իսկական ձեւը մենք  
ըմբռնում ենք, երբ տեսողութեան զիծը ուղղանայ-  
եաց է նրան և անցնում է նրա կէտրօնից։ շրջանից  
ստացւած միւս բոլոր զգայութիւնները լոկ նշաններ  
են, այդ զգայութիւնները մատնանշող թնդանոթի  
իսկական ձայնն այն է, որը լսում ենք նրա մօտ  
գտնւելիս։ Աղիւսի իսկական գոյնն այն զգայութիւնն  
է, որը ստանում ենք երբ աշքը նայում է նրա վերայ  
ոչ հեռակ, ոչ արմի պայծառ լուսին, ոչ էլ կիսա-  
խաւարին։ իսկ ուրիշ պայմաններում աղիւսից ուրիշ  
ապաւորութիւնն ենք ստանում, որը լոկ որպէս իսկա-  
կանը մատնանշող մի նշան է ծառայում։ այն է ա-  
ռաջին դէպում աղիւսի աւելը կարմիր է երեսը,  
երկրորդում՝ աւելի կապոյտ, քան է իրօք։ Ընթեր-  
քողն, երեխ, չգիտէ մի սուարկայ, որը պատկերացնե-

լիս չլինէր մէկ որոշ բնորոշ տեսակի զիրքով, որոշ նօր-  
մալ զծագրութեամբ, որոշ հեռաւորութեան վրայ,  
որոշ գունաւորութեամբ և այն։ Բայց այդ բոլոր էա-  
կան բնորոշ յատկութիւնները, որոնք իրենց ամբող-  
ջութեամբ կադմում են աւարկայի մեզ հոմար իսկա-  
կան օրեկոմի բնոցիք և հակադրուում են նոյն առար-  
կայից երբ և իցէ սաւացող այսպէս կօչւած սուրեկ-  
տիւ զգայութիւններին, նոյնպիսի հոմարակ զգայու-  
թիւններ են։ Մեր խելքը որոշ ուղղութեամբ ընտրու-  
թիւն է անում և վճիռ է զնում, թէ զգայութիւններից  
յատկապէս նրոնք աւելի իրական և էական համարենք։  
Այսուհետեւ, մեր խելքի ընտրող զործունէութեամբը  
այդ կերպ անհատականացրած առարկաների աշխար-  
հում թէ ինչը «փորձ» է անւանւում—ամբողջագէօ  
մեր ուշադրութեան վարժութիւնից է կախւած։ Երբ  
կարող է հարիւրաւոր անդամներ մարդու աշքին ընկ-  
նել, բայց, եթէ սու յամառօքն ուշադրութիւն ըլ  
դարձնէ վրան, բնաւ կարելի չի լինի ասել, թէ այդ  
իրը մտել է նրա կեանքի փորձի մէջ։ Պատահում է,  
որ հազարաւոր ճանճեր, բգէզներ ու ցեցեր ենք  
տեսնում, բայց նվ, բացի միջատարանից (էնտօմոգ),  
կարսպանում է իր զիատզաւթիւններից մանրամասն  
ու ճշգրիտ տեղեկութիւններ քաղել այդ միջատների  
կեանքի ու յատկութիւնների մասին։ Միւս կողմէց  
կեանքում մէկ անգամ տեսնուած իրը կարող է ան-  
ջնջելի հետք թողնել մեր յիշողութեան մէջ։ Դիցուք,  
չորս ամերիկացի ճանապարհորդութիւն են կատա-  
րում Նորվայում։ Մէկը տուն կրեք հարուստ պա-  
շար գեղարւեստական տպաւորութիւնների՝ զգեստների  
ընութեան տեսարանների, պարտէզների, ճարտարա-  
պետութեան, քանդակադործութեան ու նկարչութեան  
կերտածքների։ Միւսի համար ճանապարհորդութեան

ընթացքում այդ տպաւորութիւնները կարծես թէ զոյութիւն չեն ունեցել. նա ամբողջովին զբաղւած կինի զործնական կետնքին վերտքերեալ վիճակադրական տեղեկութիւններ հաւաքելով. հեռաւորութիւնները, գներ չ, բնակչութեան թւերը, քաղաքների կանալիսացիան, գուռ ու պատուհան փակելու մերանիսներ—ահա թէ ինչեր կինին նրա ողջ ուշադրութիւնը կանողը: Երրորդը, տուն վերադառնալիս, կարողանայ մանրամասն հաշիւ տալ թատրօնների, ըէստօրամների և հրապարակային ժողովների մասին, և ուրիշ ոչ մի բանի մասին. իսկ չորրորդը թերես ամբողջ ճանապարհորդութեան ընթացքում այն աստիճան խորասուզւած կինի իր խոնների մէջ, որ երբ եացրենիք կիրադառնայ, նրա յիշողութիւնը ոչինչ մտապահած չի լինի, բայց մի քանի վայրերի անուններից: Ըմբռնւած տպաւորութիւնների մի և նոյն բազմութիւնից ճամփորդներից իւրաքանչիւրը ընտրել եւայն, ինչ որ ամենից շատ է համապատասխան եղել իր ճետաքրքրութեանը, և այդ ուղղութեամբ էլ արել է իր գիտողութիւնները:

Եթէ այժմ, առարկմների պատահական համախումբները փորձում մի կողմ թողած, մեզ հարց տարու լինենք, թէ ինչպէս է մեր բանականութիւնը բանաւոր (բացիօնալ) կերպով դրանց իւրար հետ շաղկապում, կը տեսնենք, որ այս վերջին պրօցէսում էլ դիսաւոր գեր կատարողը ընտրութիւնն է: «Մածողութեան» նւիրւած գլխում կտեսնենք, որ իւրաքանչիւր գատողութիւն պայմանաւորւած է մաքի այն կարագութիւնից, որով վերլուծւելիք երեսթը մասների է բաժանւում և այս վերջիններից հէնց այն է քաղում, ինչ որ տեսալ գէպքում կարող է կանոնաւոր եղանակացութեան տանել. հանճարեղ մենք կը

կոչենք այն մարդուն, որը միշտ կկարողանայ առւելալ վորձից ճշմարտութիւն քաղել տեսական (թէօքէտիկ) խնդիրներում, և պատշաճաւոր միջոցներ ցոյց տալ գործնականներում (պըտակալիկ): Գեղարւեսափի (էսթէտիկայի) ասախարէզում մեր օրէնքը աւելի ևս անտարակուսելի է: Արւեստաւորը գիտութեամբ ընտրութիւն է անում կեղարւեսափան ստեղծագործութեան միջոցների մէջ, մերժելով այն բոլոր ձայները (տօները), գոյներն ու չափերը, որոնք իրաք չեն ներդաշնակում և չեն համապատասխանում իր երկի զիսաւոր նպատակն: Այդ միութիւնը, ներդաշնակութիւնը («բնորոշ նշանների կօնվերգէնցիան» ծէնի խօսքով), որը զեղարւեսափ ստեղծագործութիւններին առաւելութիւն է տալիս ընութեան ստեղծագործութիւնների հանդէս, ամբողջութիւն է լի մինաց իօից (զատում) է կախւած: Կեանքից վերցւած ամեն առարկայ կարող է զեղարւեսափի ստեղծագործութիւն դասնակ, եթէ արւեստաւորը կարողանայ նրա մէջ ընդգծել մի նշանը, որպէս ամենաբնորոշիչը, զէն զցելով պատահական, հիմնական նշանին չներդաշնակող բոլոր տարբերը:

Մի քայլ էլ առաջ զնալով, բարոյագիտութեան (էթիկայի) ըջանն ենք անցնում, ուր որ ընտրութիւնը գիտակցօրէն արրավետում է մնացած ամեն բանի վերայ: Վարմանը ոչինչ բարոյական արժէք չունի, եթէ մի քանի հաւասարակէո հնարաւորներից ընտրւած չէ եղել: Մաքանել յանուն բարու և շարունակ զօրացնել իր մէջ բարի գիտաւորութիւնները, արմատախիլ անել իր միջից գայթակղիչ հակումները, անշեղ հետամտել առաքինութեան ծանր շաւղին—ահաւասիկ բարոյական կարողութեան բնորոշիչ արտայայտութիւնները: Այս գեռ քիչ է. այդ բոլորը ԶԵՍ. ՀՈԴԵԲԱՆՈՒԹԻՒՆ:

լոկ միջոցներ են այն նպատակներին հանձնու, որ  
մարդ ամենից բարձրն է համարում: Իսկ բարոյա  
կան կօրսվը որ excellence էլ առելի հնուուն պիտի  
գնայ և հաւասարապէս հասանելի մի քանի նպա-  
տակներից ընտրէ այն մեկը, որը ամենաբարձրա-  
գոյնը պէտք է համարիլ: Այսուղ ընտրութիւնը շատ  
կարևոր հետևանքներ է առաջ բերում իր հետ, որոնք  
մարդու յետապայ ամբողջ գործունէութեան վերայ  
անչնչելի կնիք են գնաւմ: Եթէ մարդ խորհրդածում  
է, թէ արդեօք յանցանք գործէ, թէ ոչ, ընտրէ, թէ  
չընտրէ այս ինչ վիշակը, ստանձնէ այս ինչ պաշ-  
տօնը, ամուսնանամյ հարուստ հարսնացուի հետ ուրա-  
ընտրութիւնը իսկապէս տատանւում է իր մի քանի  
հաւասարապէս հարաւոր առապայ ընտրութիւն-  
ների միջև: Տուեալ վայրկենաւմ նրա անելիք վճիռը  
կմնիսապէս որոշում է իր ամբողջ յետադայ վարքը:  
Եթէ Շոակէնառուերը յօպուտ իր գէտէրմինիսի այն ա-  
պացոյցն է առաջ բերում, թէ կազմակերպւած ընա-  
ւորութեան աէր տուեալ մարդու կամքի կողմից  
տուեալ պայմաններում միայն մէկ որոշ վճիռ է հա-  
րաւոր, նա մոռանում է, որ բարոյական տաղապի  
րապէներում գիտակցութեան համար տարակուսելի է  
երեսում ընաւորութեան հենց այդ ենթագրական վերջ-  
նականապէս կազմակերպւած լինելը: Մարդու համար  
այնքան կարենը չէ այն խնդիրը, թէ ինչպէս գործի  
տուեալ գէտքում, աւելի կարենը է որոշելը, թէ  
ինչպիսի էակ դառնաւալն է լաւ ապագայի հա-  
մար:

Մարդու փորձն ընդհանրապէս քննելիս կարեի է  
ասել, որ զանազան մարդկանց ընտրելու կարուու-  
թիւնը շատ նմանութիւն ունի: Մարդկային ցիկն իր  
ամբողջութեան մէջ համամիտ է, թէ ինչ առարկա-

ների վերայ պէտք է առանձին ուշագրութիւն դար-  
ձնել և ինչ առարկաների պէտք է անուն տալ: Վոր-  
ծից զաւուած տարրերից մէկը միւսից գերազանեն  
էլ կատարում ենք շատ նմանօրինակ (անտօգիկ) հ-  
ղանակով: Սակայն կայ մի բոլորովին բացառիկ գէտք,  
երբ ոչ մի մարդ կատարելուակս ուրիշ նման ընտրու-  
թիւն արածչէ: Մեզանից ամեն մէկը աշխարհը իւրա-  
տեսակ է երկու կէսի բաժանում, և մեզանից իւրա-  
քանչիւրի համար կեանքի գրեթէ ողջ հետոքրքրու-  
թիւնը գրանցից մէկի վերայ է կէստրօնացած: Բայց  
երկու կէսերի միջի սահմանապիծը խիստ տարրեր  
ենք գծում: Միտքս լիովին հասկանալի կինի, եթէ  
տաեմ, որ բոլորս էլ այդ կէսերն միատե-  
սակ սնւանում ենք «ես» և «հչ-ես»: Բոլորովին  
առանձնացատուկ հետաքրքրութիւնը, որ ամեն մարդ  
տածում է դէպի իր «ես» կամ «իմս» կոչածը, թէր-  
ես բարոյական տեսակէտից մի տուղծւած է, բայց  
յամենայն գէպս պէտք է հիմնական հոգեկան փաստ  
համարւի: Աչ որ չի կարող հաւասար հետաքրքրու-  
թիւն տածել գէպի իր անձը և իր մերձաւորի անձը:  
Մերձաւորի անձը ձուրում է մասցած ամբողջ աշ-  
խարհի հետ մի ընդհանուր գանդածի մէջ, որը խիստ  
հակազրւում է իմ սեփական «ես»-ին: Մինչև իսկ  
կոփուտւած կիսամեռ ճիճուն, ինչպէս կօտցէն ասում  
է մի տեղ, իր տանջանքին հակադրում է մասցած  
ամբողջ տիեզերքը, թէպէտ և պայծառ հասկացողու-  
թիւն չունի ոչ տիեզերքի, ոչ ինքն իրեն մասին:  
Ինձ համար ճիճուն աշխարհքի մի հոգարակ մասնիկ  
է: Բայց ես էլ նրա համար մի նոյնովիսի հասարակ մաս-  
նիկ եմ: Մեզանից ամեն մէկը իր տեսակ է աշխարհը  
երկուսի բաժանում:

Հողեկան երեսյթների ընդհանուրը բնութագիրը  
տալուց յիսոյց այժմ զիմենք նոպեկան կեանքի աւելի  
մանրագնին վերբռնման:

## ՁԳԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

ԿԵՆՏՐՈՆԱԶԻՒ ՆԵԱՐԴԱՑԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ՈՒ-  
ՃԵՐԻ ՎԵՐԱՅ ԱԶԴԱՌ, ՄԻԱԿ ՆՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ  
ԵՆ: Մարդու նէարդային կէնտրօնները բազմաթիւ  
պինդ թաղունթներով են շըջապատճած, որոնք պատս-  
պարում են զրանց արտաքին բնութեան ուժերի ան-  
միջական ազգեցութիւնից: Մազերը, զանդի հաստ  
կաշին, զանգը և զոնէ երկու ուղեղային թաղանթ-  
ները, որնցից մէկը հաստ, շըջապատճած են զմի  
ուղեղը. բացի գրանից, այդ գործարանը, ինչու և  
մէջքի ուղեղը, ընկդմւած է յատուկ հեղուկի մէջ,  
որի մէջ տաես թէ լոգում է: Այսպիսի պայմաննե-  
րում ուղեղի վերայ ներդրծել կարող են միմիկայն  
հետևեալ ազգակները. 1. շատ թոյլ, բութ մէքէնա-  
կան հարւածներ. 2. արիւնի հոսանքի որակի և քա-  
նակի փոփոխութներ. 3. «բերող» կոչմած, կոմ. կէնտ-  
րօնաձիգ ուղիներով անցնող նէարդային հոսանքներ:

Մէքէնական հարւածները սովորաբար ոչ մի ազ-  
դեցութիւն չեն գործում ուղեղի վերայ: Արիւնի շըջան-  
առման փոփոխութիւններից առաջացած հետեանքները  
սովորաբար վաղանցուկ են լինում: Ծնդհակառակը,  
նէարդային հոսանքները օրգանիկ յատկութիւն ունեցող  
արդիւնքներ են առաջ բերում թէ իրենց տեղ համելիս,  
թէ յետագայում, աննկատելի հետքեր թողնելով ուղեղ-  
դային նիւթի մէջ, հետքեր, որոնք, մենք կարծում ենք,

ուղեղի կազմւածքի աւելի կամ պակաս մնայուն յատ  
կութիւններ են մնում, ձևափոխելով նրա դոր-  
ծունէութիւնը ոչչ ապագայի համար:

ԻԻՐԱՅՐԱՆՉԻՒՐ ԲԵՐՈՂ ՆԵԱՐԴ ՊԵՐԻՑԵՐԻԱՅԻ  
ՈՐՈՇ ՄՍՍԻՑ Է ԳԱԼԻՍ ԵՒ ԳՐԳՈՒԵՈՒՄ ՈՒ ԼԱԲ-  
ԻՈՒՄ Է ՆԵՐՈՒՆ ԳՈՐԾՈՒԵԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՅԱ-  
ՏՈՒԿ ՍՐՑԱՅԻՆ ՈՒՖԻՑ: Սովորաբար որոշ բնոյթի  
նէարդը անդրայ է անհամապատասխան կարգի ներ-  
գործութիւնների վերաբերմամբ: Այսպէս, օր., տե-  
սանելիքի նէարդները չեն ազգում օդի ալիքների  
տառանութներից, կաշու նէարդները՝ էթէրի լոյսի  
ալիքներից: Լեզւ նէարդը չի ազգում անուշահո-  
տութիւններից տառը չնաւ չի ազգում լսիվքի նէար-  
դի վերայ: Նէարդների իրաքանչիւր տեսանկը շըջա-  
կայ միջավայրի տառանութներից միայն այսպիսի-  
ներն է ընտրում, որոնք բացառապէս իրեն են հա-  
մապատասխանում: Արտ հետևանքն այն է, որ մեր  
զգայութիւնները իրարից անազին միջոցներով բա-  
ժանուած ընդհատուն շարքեր են կազմում: Բնաւ  
հիմքեր չունենք ենթադրելու, թէ արտաքին աշխար-  
հում տառանութների կարդը մի նոյնպիսի ընդհա-  
տուն շարք է հանդիսանում, ինչպիսին որ է մեր զգա-  
յութիւնների կարդը: Օդի ալիքների լսելի ամենա-  
արագ շարժումի (առ առաւել 10,000 տառանում մէկ  
վայրկինում) և տաքութեան ալիքների ամենադան-  
դադ շարժումի (թէրեւս, մի քանի ըիլիոն տառանում  
մէկ վայրկինում) միջն պէտք է բնութիւնը որևէ  
տեղում անթիւ միջանկեալ առահճաններ իրականա-  
ցրած լինի, որոնց ըմբռներու համար համապատա-  
խան նէարդներ չունենք: Շատ հաւանական է, որ  
ամենազանազան նէարդների մանրաթելերում կո-  
տարւող պրօցէսը մի և նոյն է, կամ զոնէ շատ նը-

ման է: Այդ է, որ հետամբռ է կոչում, բայց այդ հասանքը ցանցաթաղանթում պ ա տ ծ ա ռ ո ւ մ է արտաքին տատանումների մէկ կարգով, իսկ ականջում, օր.,—ուրիշ կարգով: Այդ պայմանաւորւած է այն ծ ա յ ր ի ապարատների տարրերութեամբ, որոնցով օժուած են կէնտրօնաձիգ նէարդներից շատերը: Ինչպէս որ զինւում ենք զգալով սուպ վերցնելու համար, և պատառաքաղով—միս վերցնելու համար, ճիշտ այնպէս էլ նէարդային մանրաթելերը մէկ տեսակի ծայրի ապարատով են զինւում օդի ալիքներն ըմբռնելու համար, ուրիշով—էթէրի տիքներն ըմբռնելու համար: Ծայրի ապարատը միշտ ձևափոխւած էպիտէլիալ բճիճներից է բաղկացած, նէարդների մանրաթելերի հետ մի անընդհատ ամբողջութիւն հանդիսանալով: Ինքը նէարդի մանրաթելը անմիջապէս չէ աղջուում արտաքին գործօնից, որը նախ ծայրի ապարատի վերայ է ներդործում: Տեսանելիքի նէարդի մանրաթելերը արմի ճառագայթներից անմիջական տպաւորութիւն չեն ստանում: Կաշու նէարդային ընին կարելի է նպել ստորցով՝ առանց ցրտի զբայութիւն առաջացնելու<sup>1)</sup>: Նէարդները հապարակ նաղորդիչներ են, ծայրի ապարատները բազմաթիւ անկատար հեռախոսներ են, որոնցով արտաքին աշխարհը խօսում է և որոնցից իւրաքանչիւրը լսում է խօսուածի միայն մէկ մասը նէարդների մանրաթելերի կէնտրօնական ծայրի մօտի ուղեղային բճիճները նոյն թւով հեռախօսային կայարաններ են— դրանց միջոցով իւրեք ըմբռնում է հեռուից իրեն ուղրած խօսքերը:

ՈՒՂԵՂԻ ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐԻ «ՍՊԷՅԻՑԻ ԷԿԱՐ»

1) Սակայն փորձի ենթարկող անձ այս կաղերմէնուի դէպօւմ ց ա ւ եղաւ: անհամեշտ, է ընդունել, որ ամեն տեսակ նէարդային մանրաթելերը, ինչպէս և ծայրի ապարատները, որու չտփով ընդունակ են լարւելու մէքնափակն և էլեկտրական գործիչների միջոցով:

ԳԻԱՆԵՐԸ: Մնը որոտօններաշ չափով ճշգրիտ հետամտելապարզել են այն ուղիները, որոնցով զգացող մանրաթելերը՝ կէնտրօնական մասերը մուտք գործեն լուց յետոյ՝ ուզուում են մինչևի իրենց վերջանալը ուղեղի խորշեցի գորշ նիւթի մէջ: Սաորկ կտեսնենք, որ այդ գորշ նիւթի գրգռումին ընթացակցող գիտակցական սրբացեմները փոփոխուում են, նայած թէ գորշ զանգվածի որ մասը կդրագութիւնը տեսաղական է լինում, եթէ դրգուսող ծոծրակի մասներն են, բաղական է լինում քունքի մասերի վերին շրջանի գրգռումն զէպքում: Կէնտրօնաձիգ նէարդների բերած գրգռին ուղեղի կեզեի իւրաքանչիւր շրջանը այնպիսի եղանակով է պատասխանում, որի հետ, ըստ երևացթին, մշտապէս զգայութեան որոշ յատուկ (սպէցիֆիկ) տեսակ է կապակցուած: Այդ մնանել էին նէարդային համակարգութեան ապէցիֆիկ էներգիաների» օրէնք: Մնշուշտ, անկարող ենք, թէկադ ենթադրաբար, բացակրել այդ օրէնքի հիմքը: Հոգերանները (Լիսիս, Վունդ, Թօզէնտալ, Հօրդէլէր և այլք) շատ են վիճել, թէ զգայութիւնների ըստ որակի ապարերութիւններն արդեօք կեղեկի լոկ զրգումն վայ յ ր բ ց է կախած, թէ նէարդի բերած հոսանքի յատի կութիւններից: Տարակոյս չկայ, որ ծայրի ապարատի վերայ շարունակութար աղղող որոշ տեսակի արտաքին ոյժը ատամանաբար ձևափախում է այդ ապարատը: ծայրի ապարատից ստացված որոշ տեսակի լարւածութիւնը ձևափոխում է նէարդային մանրաթելերը, և այդ ձևափոխուած նէարդային մանրաթելերի միջոցով որոշ տեսակի հասանք հաղորդուում է կեղեկի (կօրտիկալ) կէնտրօնին և ձևափախում է այդ կէնտրօնը: Իր հերթին կէնտրօնի ձևափոխութիւնը փոփոխում է առա-

ջանալիք հոգեկան վիճակը, թէպէտ և ոչ ոք չի որոշի,  
թէ այդ ինչպէս և ինչն է կատարուում: Բայց այդ  
փոխազդող ձևափոխութիւնները պէտք է շատ դան-  
դաղ տեղի ունենան, և, քանի որ խնդիրը չափահաս  
անհատի է վերաբերում, վատահ կարելի է ասել, որ  
կեզեի զրգուող վայրն է, որը, աւելի քան որ և է  
մի այլ բան՝ որոշում է նրա ունենալիք զդայութեան  
որակը: Թէկուզ ցանցաթաղանթը սեղմելիս լինենք,  
թէկուզ տեսանելիքի կենդանի նէարդը ծակելիս, կըտ-  
րելիս, կզմթելիս կամ ելեքտրականութեամբ զրգու-  
մու լինենք՝ փորձի ենթարկւող անձը միշտ լրյուի ա-  
լիքներ կզայ, որովհետեւ մեր այդ փորձերը վերջ ի  
վերջոյ կեզեի ծոծրակի մասի զրգուում են առաջա-  
ցնում: Այսպիսով, արտաքին առարկաներն զդալու  
մեր սովորական եղանակները կախած են այն բա-  
նից, թէ ուզեղի ինչ մասերի ներ են կապակցւած  
որոշ ծայրի ապարատները, որոց վերայ է ընկնելու  
արտաքին զրգիւը: Արևի պայծառութիւնը ու կրակը  
տեսն ում ենք միմիշյն այն պատճառով, որ  
այդ առարկմանների ճառագայթած էթէրային ալիքնե-  
րի տատանութեներն ըմբռնելու ընդունակ միակ ծայ-  
րի ապարատը նէնց այն նէարդային մանրաթելերն  
է զրգուում, որոնք զէպի տեսանելիքի կէնտրոններն  
են տանում: Եթէ ուզեղի արրիջի ներքին յարաքե-  
րութիւնների մէջ փոխանակում կատարել կարողա-  
նայինք, արտաքին աշխարհը մեր առաջ բոլորուին  
այլ կերպարանքով կներկայանար: Եթէ նար լինէր,  
օր., մեր տեսանելիքի նէարդի արտաքին ծայրը մեր աշ-  
կանջին կպցնել, իսկ լսելիքի նէարդի արտաքին ծայ-  
րը—աչքին, կայծակը կլսէինք և որսար կատանէինք,  
ովմֆօնիան կտեսնէինք և խմբավարի քանոնը կլսէ-  
ինք: Նման հիպոտէսները լաւ վարժութիւն կարող են

լինել իդէալիստիկ փելիսոփայութիւնից անաեղեակ-  
ների համար:

ԶԳԱԾՈՒԹԵԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆ ԸՄՅՈՒՆՈՒԹԻՒ-  
ՆԻՑ: Խիստն առած, անկարեցի է որ ուշեւթէ ինչ  
է զդայութիւնը. զիտակցութեան առօրիայ կեանքում՝  
ինչ որ սովորաբար զգայութիւններ են անւանում  
և ըմբռնութիւնները աննկատելի կերպով մէկը միւ-  
սին է փոխաւում: Կարող ենք միշտ արձանադրեր որ  
զգայութիւնները առերլի զիտակցութեան և կը գ-  
րն ական տաքրեցն ենք հասկանում: Դրանք նէրու-  
դային հուանակները ուզեղի մէջ մուտք գործելու ան-  
միջադեպ զիտակցւած արգիւնքն են, զեւ նախ քան  
առաջւաց փորձի զուգորդութիւնների կամ յիշողու,  
թիւնների յարուցւելը: Բայց, պարզ բան է, որ զի-  
տակցական կեանքի միշտն ամենափաղ հառակում  
կարելի է այդտիսի անմիջական զդայութիւնները ու-  
նենալ: Իսկ զարգացած յիշողութեան տէր ու գու-  
գորդութիւնների պաշար ձեռք բերած չափահաս  
մարդկանց համար զրանք բոլորուին անհնարին բան  
են: Նախ քան զգայարանների միջոցով տպաւորու-  
թիւն ստանալը՝ ուզեղը խորը քնի մէջ է սաւզած,  
և զիտակցութիւնն իսկապէս բացակայում է: Ծնւե-  
լուց իւաոյ մինչի իսկ առաջին շաբաթը մասուկները  
զրեթէ անընդհատ քնի մէջ են անցկացնում: Բաւ-  
ւականին զօրեղ աղդում (իմպուլս) է ոլէտք զգայու-  
րանների կողմից այդ նիճը ընդհատելու համար:  
Նորածնի ուզեղում այդ իմպուլսը բացարձակ զուտ  
զգայութիւն է յարուցանում: Բայց փորձը ռհազիւ  
նշմարելի հետքեր» է թողնում ուզեղալին նիւթում,  
և զգայարանների կողմից փախազբաւած թյետագայ ար-  
պաւորութիւնները ուզեղում մի բէակցիայ են յարու-  
ցանում, որի մէջ նախորդ տպաւորութեան արթ-

նացած հետքը իր գերն է կատարում: Որպէս արդիւնք ստացուում է զգայութեան մի նոր տեսակ և իմացման մի աւելի բարձր տատիճան: Առաջիկայի մասին «իդէաները» միախառնուում են նրա լոկ զգայութիւնների համար ներկայ լինելու պարզ գիտակ ցութեանը: մենք անւանուում ենք առարկան, զամանուում ենք (կատիֆիկացիայ), համեմատում ենք միւսների հետ, դատողութիւններ ենք յորինում նրա մասին, և այդպիսով մինչև կեանքի վերջը աւելի ու աւելի աճում-բարդանում է գիտակցութեան հստարաւոր նիւթը, որը կարող է մատակարարւել արտաքին տպաւորութիւնների մեծացող յորձանքի կողմից: Առհասարակ, առարկանների աւելի բարձր կարգի գիտակցումն է այդ, որը ըմբռնում է կոչւում. իսկ առարկանների ներկայութեան ը տարրորոշւած (ոչ-պայծառ) գիտակցումը զգայումն է, ինչ չափով որ առհասարակ մենք՝ կարող ենք այդպիսի վիճակ ունենալ: Մեր ուշադրութեան կատարելապէս ցրւած հզած վայրկեններին, ըստ երևոյթին, ընդունակ ենք լինում որոշ չափով սուզւել անկատ զգայութիւնների յորձանքի մէջ:

**ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԻՄԱՅՄԱՆ ՔՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԸՑ:** Այսպէս անած, զուտ զգայութիւնը վերացութիւն է (աբստրակցիայ). փորձում ինքն ըստ ինքեան դա շատ հագւադէպ է իրականնում. զուտ զգայութեամբ ըմբռնող առարկան էլ վերացական առարկայ է—նա չի կարող բռնորովին առանձնացած կոյութիւն ունենալ: Զգայութեան առարկաները «զգայական յատկութիւններն» են: Աչքի զգայութիւնները առարկանների գոյն երն են զգայութիւնները—ձայնները, կաշու զգայութիւնները—ձանքութիւնը, որ ա-

ծայր ու թիւնը, տաքութիւնն ու ցըրք տութիւնը: Մեր մարմնի բոլոր գործարաններից կարող են նէարդային հոսանքներ շարժւել՝ մեզ տեղիկացնելու ցաւի յատկութեան մասին և մասամբ էլ հաջոյքի յատկութեան մասին:

Կայ չունութիւնն, խորթուքորդութեան և այլ դրանց նման յատկութիւնները, ինչպէս կարծում են, ծագել են շօշափելիքի ու մկանների զգայութիւնների համազգեցութիւնից: Միւս կողմից, առարկանների երկրոչափական յատկութիւնները, դրանց ձեզ, մեծութիւնը, իրարմիջն եղած հեռաւորթիւնը, և այն (ինչ չափով որ դրանց նոյնացնում ու տարբերում ենք) հոգեբանների մեծ մասը անհնարին է համարում առանց նախորդ փորձի մտաբերութեան աջակցութեան. այդ յատկութիւնների իմացումը, դրանց կարծիքով, վեր է զուտ զգայութեան ուժից:

Մի ԲԱՆԻ ԻՄԱՅՈՒՄ ԵԼ ԻՄԱՅՈՒԹԻՒՆ ՄԻ ԲԱՆԻ ՄԱՅՈՒՄՆ: Սյապիսի տեսակէտից զգայութիւնը միայն իր առարկայի, կամ բովանդակաւթեան, կատարեալ պարզութեամբ է տարբերուում ըմբռնութիւնից: Պարզ յատկութիւն լինելով՝ զգայութեան առարկան աչքի է ընկնում իր միասնութեամբ. զգայութեան ֆունկցիան, հետեւապէս միասն երևացող իրողութեան պարզ իմացումն է: Իսկ ըմբռնութեան ֆունկցիան արգէն մէ՛ որոշ իմացումն է իրողութեան մասին: Բայց այս վերջին դէպքում մենք շարունակ պիտի իմանանք, թէ այդ ինչ առարկայ է, որ աչքի առաջ ունենք, և այդ «ինչ»-երի բազմագան պաշարը զգայութիւններն են մեզ մատակարում: Կեանքի ամենամատադ շրջանում մեր մըտքերը զրեթէ բացառապէս կօնկըտ բնոյթ են ունենում: Դրանք մեզ հաղորդում են բազմաթիւ «ինչ»-

եր, «այն»-եր, «աւա»-եր: Կօնդիլիակի ասածով, առաջին անգամ լոյս տեսնելիս՝ աւելի ինքն եր ո յօրինում ենք, քան առեւում ենք այդ լոյսը: Բայց մեր յետագայ ամբողջ տեսողական իմացութիւնը այդ փորձի վերայ է յենուում: Եթէ դրանից անմիջապէս յետոյ յանկարծ կուրանայինք, մեր տեղեկութիւնները չեն կորցնիլ դրա էական գծերը՝ քանի դեռ պահելիո կիմնենք՝ գրա յիշողութիւնը: Կոյքերի դպրոցներում աշակերտներին նոյնչափ՝ տեղեկութիւն է որւում լոյսի մասին, ինչ չափ որ և միւս դպրոցներում. ուսումնասիրում են և արտացոլումը, և բնկեկումը, և սպէկտրը, և էթէրի հիմագայքար և այլն: Բայց այդպիսի ուսումնարանի ի ծնէ կոյք յաւագոյն աշակերտը պահանջներ ունի իր իմացութեան մէջ, որոնցից զերծ է՝ ամենանզէար տեսնող երեխաներից: Աչք ունեցազր երբէք չի բացառի կոյքին, թէ ինչ բան է լոյս ընդհանրապէս, և ըդգայութիւնների որոշ աշխանի կորուսոք՝ չէ կարելի փոխարինել ոչ մի դպրոցական կրթութեամբ: Այս ամենը այնքան ախներէ է, որ զգայութեան՝ որպէս փորձի տարրի՝ գոյութիւնը ենթադրում են մինչև իսկ այն փիլիսոփաները, որոնք ամենքից քիչ են հակած նրան կարեորութիւն վերագրելու և գնահատելու նրա մատակարարած իմացութիւնը:

**ԶԳԱՅՅՈՒԹԵԱՆ ՏԱՐՅԱՑՆԵՐԻ ՆՐԵՒԱԿԱՅՈՒԹԻ:**  
**ԹԵԱՆ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԻՑ:** Թէ զգայութիւնը, թէ ըմբռութիւնը, իրարից տարրեր վնելով հանդերձ, նման են նրանով, որ զիտակցւում են ոլայծառ, կենդանի, որպէս կանգնած մեր տչքի առաջնորդ լոյսակառակը, լոկ մասձւող, մատքերւող կամ մաքով պատկերացւող առարկաները յարաբերաբ ազօտ են լինում և պարկ այն գույն

նեղութիւնից, այն իրական ներկայութեան յատկութիւնից, որն ունենում են զգայութեան առարկանները: Զգայութիւնների նետ կապակցւած պրօցէսները ուղեղի կեղեռում կախում ունին մարմնի պէրիփէրիայից գալող կէնտրօնաձիղ հոսանքներից. զգայութիւն ստացւելու համար պէտք է, որ արտաքին տարկան որպէս գրգռիչ աղդէ աչքի, ականջի և այլն վերայ: Միւս կողմից պարզ վերարտազրական մտապատճենների հետ կապակցւած պրօցէսները ուղեղի կեղեռում, ամենայն հաւանականութեամբ, կախում ունին ուղեղի ուրբիչից գալող նէարդային հոսանքներից: Սյապիսով, կարելի է կարծել, որ պէտքիփէրիայից գալող նէարդային հոսանքները ուրբիչից գործունէութիւն են յարուցանում, որը անկարող են յարուցանել ուղեղի ուրբիչից խորշերից գալող հոսանքները:

Սյդ կարգի գործունէութեան հետ, բայ երևացիքին, կապ ունին զիտակցւութեան կողմից ըմբռնելի առարկայի կենդանիներան և օբեկտիւ իրականութեան յատկութիւնները:

**ԶԳԱՅՅՈՒԹԵԱՆ ԱՐՅՐԿԱՑՆԵՐԻ ՈԲԵԿՑԻԿ ԼԻՆԵԼՔ:**  
**Իւրաքանչեւր իր կամ յատկութիւն արտաքին տարածութեան մէջ է զգացւում:** Զէ կարելի պատկերացնել մի փայլ կամ գոյն այլ կիրով, բոյց եթէ որպէս տարածային, տարածութեան մէջ սփռւած և մեր մարմնից գուրք գանւող մի բան: Զայներն էլ տարածութեան մէջ են լաւում հպումը մարմնի մակերևոյթի վերայ է աեղի ունենում, ցան անպատճառ որիէ զործարանում է զգացւում: Հրդերանութեան մէջ տարածւած էր այն կարծիքը, իբր թէ զգայական յատկութիւնները նախ հէնց մաքում են ըմբռնուում, և աղա միայն զբանաըրառում են ժողով

միջից սրա ինտելեկտուալ կամ գերզգայական ակտով: Յօդուատ այդպիսի կարծիքի ոչ մի հիմք բերել չէ կարելի: Այս միակ փաստերը, սրմաք թւում է թէ կարող էին այդ կարծիքի օգտին վկայել, աւելի լաւ են բացադրում այլ եղանակով, ինչպէս որ կտեսնենք սառը երեխայի ստացած առաջն զգայութիւնը արդէն նրա համար արտաքին աշխարհ: Եթէ կերպը, որը նա իմանում է կեանքի յևտագայ աշխանաբում, ուրիշ բան չէ՝ բայց եթէ զարգացումը ըստ կղբնական, այսպէս ասած սականային, տպաւորութեան, որը՝ հետզհետէ աճելով ու բովանդակութեամբ լեցւելով՝ այնպիսի մի մեծ բարդ ու բակադրեալ բան է գտնել, որ նրա նախնական վիճակը բոլորովին կորել է յիշողութիւնից: Երբ երեխան աղօտ արթնանում է զիտակցելու ի՞նչո՞ր բան այստեղ, «այսիկ» (կամ այնպիսի մի բան, որի համար նոյն իսկ «այսիկ» բառն էլ շատ է որոշ, և որի իմացումը աւելի լաւ է «հրէսիկ» պարզ միջարկութեամբ բնորոշել), երեխան հանդիպում է մի առարկայի, որի մէջ (թէկուզ և այդ պարզ զգայութիւն լինի) արդէն կան բոլոր «խելքի կատէզօրիաները»: Ըստանը լոգ առարկայում կան արտաքին օբյեկտն ընոյթը, սուբստանցիայի և պատճառականութեան պարզաները բառիս ճիշտ նոյն իմաստով: Ինչպէս որ այդ կատէզօրիաները կան ամեն մի առարկայում, կամ առարկաների սիսթէմում աւելի չափահատ մարզու համար: Դեռահաս էտակ հրճանքով է հանդիպում իր աշխարհին, և իմացութեան հրաշքը, մօլուքի ասածով, մէկ անգամից է ծագում և երեխայի սառին զգայութեան մէջ, և նիւտօնեան ուղեղի մեծագոյն յղացումներում:

Զանազան պէրիֆէրիկ գործարաններից գալող բազ-

մաթիւ, նէարդային հոսանքների միաժամանակ զնուզադիակեն է, հաւանօրէն, առաջին զգայական փորձի բնախոսական պայմանը, սակայն այդ օրդանիկ պայմանների յօդնակիութիւնը չի արգելում զիտակցութեանը մէկ կիտակցութիւն լինելու: Ստորև կը տեսնենք, որ զիտակցութիւնը կարող է մէկ լինէն թէկուզ մէկ անդամից իմացութեան բազմաթիւ առարկաներ ներկայ լինեն և ինքն էլ բազմաթիւ գործարանների միաժամանակ գործակցութիւնից կախւած լինի: Բազմաթիւ բերող հոսանքների կողմէնց երեխայի զիտակցութեանը մատակարարւած առարկան մի խայտարդէա աղմկալի քառային խամսուրդնէ: Սյդ խամսուրդը բերեխայի աշխարհն է հանդիսանում: մեզանից մեծ մասի համար աշխարհը նոյնպիսի մի խամսուրդ է, ընդունակ առարտուծւելու և մատերի տարրալուծելի, բայց իրավէս տակաւին չտարրալուծւած: Նա ամբողջօվին տարածութիւն գրաւող մի բան է: Ինչ չափով որ նա մեզ համար վերլուծւած և մասերի տարրալուծւած չէ, կարելի է ասել որ մենք այդ իմանում ենք զգայութեան ձեռք: Բայց հէնց որ բաղադրիչ մասեր տարբերեցինք նրա մէջ և սկսեցինք ուրոշ յարաբերութիւններ զիտակցել զրանց միջն՝ մեր իմացութիւնը ըմբռնութիւն, նոյն իսկ վերտացութիւն է դառնում, և որպէս այդպիսին այս զիտակցում քննւելու չէ:

ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԱՓԼ (ինտէնսիվութիւնը), կոյսը կարող է այնքան աղօտ լինել, որ զգալիօրէն չի փարատի խաւարը, ձայնն այնքան խուզ, որ անսւելի կինի, հաղումն այնքան թոյլ, որ չենք զգայ զրան: Այլ խոսքով ասած, զրգիսը պէտք է որոշ մեծութեան լինի, որպէսզի որևէ համապատասխան զիտակցելի զգայութիւն յարուցանէ: Ե մք է որէն,

քըն է այս Փէխնէրից բանաձևած — զրգիոր պէտք է սրոշ սահմանագիծ անցնի, նախ քան առարկան զիտակութեան մէջ մուտք կդորձէ: Հաղիւհազ շէմքից վեր գտնւած զրգիոր կոչում է տնօմու վիճակ, անձիւ եւ անձիւ անուանելի, լսելի և այլն): Եթէ շէմքից սկսած առարկանաբար զօրեղացնենք զրգիոր, զգայութիւնն էլ կ'աճի, թէպէտ և աւելի դանդաղօքն, մինչև որ վերջապէս կիամի բարձրագոյն կէտին, որից գէնը զգայութեան թափը չէ սաստկանում, ինչքան էլ որ զրգիոր մեծացնելու լինենք: Մովորաբար, գեսկո բարձրագոյն կէտին չհասած՝ զգայութեան սոլէցիֆիկ ընոյթին միախառնելու է ըսկառմ ցաւը: Այդ բանը բոլորովին պարզ կերպով կարելի է դիմել զօրնդ ճնշման, մեծ առքութեան և ցրտութեան, պայծառ լոյսի և ուժդին ձայնի դէպքերում: Ճաշակելիքի և հոտոսակիքի զգայութիւնների դէմքում նոյնը պահան որոշութեամբ դիմելի է լոկ այն պատճառով, որ այստեղ աւելի դժւար է զրգիոր զօրեղացնելը: Միւս կողմից, բոլոր զգայութիւնները, նոյն իսկ այսպիսինները, որոնք անախորժ են մեծ թափի դէմքում, նւազագոյն աստիճանում աւելի դուրեկան են լինում, քան անդուր: Հաղիւ դառն համը կամ նեխւած բանի թոյլ հոտը կարող են, դոնէ, որոշ հետաքրքրականութիւն ունենալ:

Վէբէրի եկ Ֆէխնէրի օրէնքի ՄԱՍԻՆ Ասացի, թէ զգայութեան թափը իրեն յարուցանող զրգուց դանդաղ է սաստիանում: Եթէ շէմքը իսկի լինէր, և եթէ զրգուի իւրաքանչիւր հաւասար սաստկացումը զգայութեան թափի հաւասար սաստկացում առաջացնելիս լինէր, այս երկու մեծութիւնների միջև եղած յարաքերութիւնների պատկերը այլ կերպի կինէր, քան ինչ որ տեղի ունի բնութեան մէջ:

Զգայութեան զրգիորց յետ մնալու և զգայութեան որգիորի յարաքերութեան օրէնքի ճշգրիտ բանաձեւումը Վէբէրին է վերագրուում, որովհետեւ նա էր դրա առաջին գիւտն անողը ծանրութեան զգայութեան վերաբերմամբ:

Վէբէրի բանաձեւ կարելի է և այսպէս ձետքանել — զգայութեան հաւասար յաւելումներ ստանալու համար զրգիոր պէտք է սաստկացնել յարաք երաք ար հաւասար յաւելումներով: Պրօֆ. Ֆէխնէրը (Լէյպցիգում) Վէբէրի օրէնքի վրայ մի տեսութիւն հիմնեց զգայութիւնները քանակօրէն չափերու համար, որ բազմաթիւ և բուռն բնագանցագիւտական վիճաբանութիւնների տոիթ եղաւ: Ֆէխնէրի կարծիքով, զրգիոր սաստկանային՝ կարող ենք որպէս զգայութեան միաւոր ընդունել զգայութեան իւրաքանչիւր հազիւ նշմարելի նոր սաստկացումը, և այդ բոլոր միաւորները իւրաք հաւասար համարել, չնայած այն փաստին, որ զգայութեան հաւասար տպառ տպառ տպառ չեն թւում: Հարիւր ֆունտանոց ծանրութեան համար հազիւ նշմարելի սաստկացում հանգստացող բազմաթիւ ֆունտերը աւելի մեծ քանակութիւն են թւում՝ եթէ այդ հարիւր ֆունտին աւելացնելու լինենք, քան մի քանի ունցը, որոնք հազիւ նշմարելի յաւելումն են հանգստացում մէկ ֆունտի համար: Ֆէխնէրն աշխաթող արեց այս իւրողութիւնը: Նա այնպէս էր ընդունում, իբր թէ շէմքից սկսած մինչև Տ թափը զրգիոր աստիճանաբար զօրեղացնելու դէպքում զգայութեան առանձին-առանձին նշմարելի սաստկացումներ զգալիս՝ այդ Տ թափը սանդուզքի ամբողջ տարածութեան վերայ կատարելապէս հաւատական չոգութիւնն:

սար ո միաւորներից է բաղկացած: [Ուրիշ խօսքով, ընդունելով Տ ն զգայութիւնը նդհանը ապակիս, ձ-ն հազիւ նշմարելի սաստկացում՝ կստանանք հաւասարութիւն աՏ=const: Այս-ինչ ձՏ առաջացնող զրգիսի սաստկացումը (անւանենք այդ ձR) փոփոխական է: Ֆէխնէրը դրան «ատրբերման շեմք» կոչեց, և որովհետեւ դրայարաբերութիւնը R-ին մշտական է, ապա կունենանք հաւասարութիւն  $\frac{dR}{R} = \text{const.}$ : Քանի որ զգայութիւնը թւով արտայայտելու հստաբաւորութիւն ներկայացաւ, իսկոյն, Ֆէխնէրի ասելով, հոգեբանութիւնը հստաբաւորութիւն ստացաւ մաթէմատիկական վերլուծման ընդունակ ճշգրիտ զիտութիւն դառնալու: Տւեալ զգայութեան մէջ եղած միաւորների թիւը որոշելու ընդհանուր բանաձեւը ըստ Ֆէխնէրի է — S=C. log. R, որտեղ S-ն զգայութիւնն է, R-ն քանակիորէն արտայայտւած զրգիսն է, իսկ C-ն այն մշտականն է, որը պէտք է որոշել առանձին փորձի միջոցով զգայութիւնների իւրաքանչիւր յատուկ (սպէցիֆիկ) կարգի համար: Զգայութիւնը յարաբերական է զրգիսի լոգարիթմին:

Ֆէխնէրի հոգեբնագիտական բանաձեւը (այս անւանումը Ֆէխնէրի տւածն է) բազմակողմանի քննադատութեան ենթարկեց և որովհետեւ այդ բանաձեւը ոչինչ գործնական արդիւնք չտեսց՝ մենք նրանով չենք զբաղւի: Ֆէխնէրը զրբի զլիսաւոր արգիւնքն այն եղաւ, որ նա էկոպէրիմէնտական եղանակով ստուգեց ու հստատեց ճշտութիւնը Վէրէրի օրէնքի (որ զործ ունի միմիայն հաղիւ նշմարելի տարբերութիւնների հետ և ոչինչ չէ ասում ամբողջ զգայութիւնը շափելու մասին) և զարկ տւեց ստատիստիկական մէթօդներ գործադրելու խնդրին: Զանազան դասի զգայու-

թիւնների վերլուծումը ցոյց տւեց, որ Վէրէրի օրէնքը միայն մասամբ է ճիշտ: Ստատիստիկական մէթօդնների խնդիրն յարուցանել պէտք եղաւ այն պատճում է երկու տւեալ վայրկեանների միջև: Այսպէս, երևան հանւեց, որ երբ երկու զգայութիւնների աարբերութիւնը հազիւ նշմարելի գառնալու սահմանին է հստած լինում՝ այդ տարբերութիւնը մէկ զգում ենք, մէկ ոչ: Մեր մէջ անդադար տեղի ունեցող պատահականներին փոփոխութիւնների պատճառով անհնարին է որոշել զգայութեան հազիւ նշմարելի սաստկացումը, եթէ ի նկատի չառնութեամբ միջանց գնահատումը հանւած մի միջին եզրակացութիւն: Այդ պատահական վրիպումները հաւասարապէս կարող են և մեծացնել և փոքրացնել փորձից ստացւած ցուցումները մեր զգայուղութեան աստիճանի մասին: զրանք հարթում են միջին թիւի միջոցով: միջին նօրմայից վեր և վարեղած թւերը զումարւելով իրար հստաբարակշտում են և այդպիսով որոշում է նորմալ զգայուղութիւնը, եթէ այդպիսին զոյութիւն ունի (այսինքն մի զգայուղութիւն, որը կախւած լինի ոչ թէ պատահական, այլ մշտական պատճառներից): Միջին թւեր ստանալու բոլոր մէթոդները իրենց դժւարութիւններն ու որոգայթներն ունեն և ներկայումս շատ նրբամիտ վիճաբանութիւնների առարկայ են: Իբրև օրինակ, թէ նրչափ աշխատանք են պահանջում ստատիստիկական մէթոդներից միքանիսը և թէ որքան համբերատար են գերմանացի հետազոտողները, կարող եմ մատնանշել այն փասար, որ Վէրէրի օրէնքը ճնշման զգայութեան վերաբերմամբ այսպէս կոչւած «ճիշտ և սուտ գէպքերի մէթօդի» օգնութեամբ ստուգելիս՝ Ֆէխնէրը արձանագրել եր աղիւսակինքում և

հաշւի առել մօտ 24.576 առանձին սւեալներ:

ԶԳԱՅՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՐԴԻ ԲԱՆԵՐ ԶԵՆ: Փէխնէրի ամբողջ ձեռնարկութեան դէմ հիմնաւոր առարկութիւն է հանդիսանում ըստ երևութին այն փաստը, որ նոյն ինքն գդայութեան ամեն տարբերելի աստիճան է ամեն տարբերելի որոկ զիտակցութեան մի-մի անբաժանելի իրողութիւն են ներկայանում. թէկուզի մեր զգայութիւնների արտաքին պատճառները բազմաթիւ մասերից են բարկացած լինում: Ամեն զգայութիւն մի միապազաղ ամբողջութիւն է: Ինչպէս ասում է Միւնստերբէրգ զը — «զօրեղ զգայութիւնը թոյլ զգայութիւնների արտազլուալը կամ գումարը չէ, այլ աւելի շուտ մի նոր ու անհամեմատելի բան է. այնպէս որ, ձայնի լոյսի և ջերմութեան զօրեղ ու թոյլ զգայութեան միջն չափելի տարբերութիւն որոնելը առաջին հայեացքից նոյնչափ անմիտ մի զործ կլինէր, ինչպէս եթէ փորձէինք մաթէմատիկօրէն որոշել աղիի ու թթութիւններն էլ են իրարից տար բերում, որ զանազան տեսակի տար բերութիւնները զգայութիւնը չէ պարունակում աւելի զօրեղի մէջ, ապա ուրեմն հոգեբանորէն չի լինի եթէ ասենք, թէ վերջին զգայութիւնը տարբերում է առաջինից մի յաւելում (ովու): Ցիրաւի, վաս-կարմիր գոյնի մեր զգայութիւնը կարմրաւուն գոյնի զգայութիւն չէ վրան էլի կարմրաւուն աւելացրած, վաս-կարմիրը կարմրաւունից որակով տարբեր մը բան է: Նմանապէս էլէկարակոն աղեղի լոյսի մեր զգայութեան մէջ ձրագուի բազմաթիւ մխացող մոմերի լոյս չէ պարունակում: Իւրաքանչիւր զգայութիւն ինքն ըստ ինքեան մի անբաժանելի միաւոր է հանգիստ-

1) «Beiträge zur exp. Psychologie», Heft 3, § 4.

նում, և բոլորովին անխմաստ բան կլինէր առելը, թէ զգայութիւնները բազմաթիւ միաւորների գումարներ են: Այս եղանակացութիւնը իսկի չէ հակասում այն փաստին, որ թոյլ զգայութիւնը ելակէտ ընդունելով և աստիճանաբար զօրեղացնելով՝ զգում ենք, թէ ինչպէս նա սաստկանում է «աւելի, աւելի ու աւելի»: Այստեղ ոչ թէ միենոյն նիւթի քանակն է աւելանում, այլ ընդհակառակը, աւելի ու աւելի մեծանում է տարբերութիւնը, բաժանող տար ծութիւնը աւելալ զգայութեան և այն զգայութեան միջն, որ ելակէտ ենք ընդունել: «Տարբեր բերման» ներբւած զիտում կտեսնենք, որ մինչև իսկ պարզագոյն զգայութիւնների միջն կարելի է տարբերութիւն նկատել: Կտեսնենք նաև, որ տարբեր ութիւններն էլ են իրարից տարբերում, որ զանազան տեսակի տար բերութիւնները զոյլութիւններն են, և որ այս տեսակներից ամեն մէկում առարկանների շաբքը կարելի է դասաւորել աստիճանաբար սաստկացման կարգով: Այս շաբքերից ամեն մէկում առաջին օկալը աւելի շատ է տարբերում վերջինից, քան միջինից: Իստէնսիւութեան տարբերութիւնը տարբերութեան հարաւոր սաստկացման այդպիսի տեսակներից մէկն է. ուստի և ինտէնսիւութեան զօրեղացման մասին մեր դասուղութիւնները միասեռ միաւորների գումարման հիպօտէսի կարիքը չունեն սաստկացող ամբողջութիւն կոյացնելու համար:

ԱՅՍՊէՍ ԿՈՉԻԱԾ «ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ»: Վէբէրի օրէնքն ըստ երկութին լոկ մի մասնակի զէպք է աւելի լայնածաւալ օրէնքի, որի համաձայն՝ որչափ շատ առակաների վերայ է ուղարձ լինում մեր ուշագրութիւնը՝ այնքան քիչ մաս-

քամանութիւններ ենք կարողանում նկատել աւեալ ըմբռնութեան մէջ։ Այս օրէնքն ակներեւ է, երբ առարկաները տարբեր տեսակի են, ինչ հեշտութեամբ ենք մոռանում մարմնի տկարութիւնը գւարթ խօսակցութեան ժամանակ. նրչափ քիչ ենք նշմարում ազմուկը սենեակում՝ երբ մեր ուշադրութիւնը աշխատանքով է կլանւած։ Աճ plurā intentus minus est ad singula sensus, ըստ հին առածի, կարելի էր աւելացնել, որ ուշադրութեան առարկաների միատեսակը լինելը այս արդիւնքը չէ փոխում, բայց որ միևնույն տեսակի երկու զօրեղ զգայութիւն ըմբռնելիս, գիտակցութիւնը, հէնց գրանց մեծ ինտէնսիվութեան պատճառով, անկարող է երեան բերել այն տարբերութիւնը, որն անմիջապէս իր վրայ կպարճնէր ուշադրութիւնը՝ եթէ այդ զգայութիւններն աւելի թոյլ լինեն, ուստի և ոչ այնչափ ցրւեին մեր ուշադրութիւնը։

Զգնդենք, թէ այս միտքը բացարձակօրէն ձիշտէ է<sup>1)</sup>։ Առ այժմս կարող ենք որպէս անտարակուսելի ընդհանուր իրողութիւն ընդունել, որ կէնտրօնաձիգ նէարդական հոսանքների հոգեկան նէրգործութիւնը կախում ունի նաև միւս միաժամանակ գործող կէտրօնաձիգ հոսանքներից։ Կողմնակի հոսանքները փոփոխում են նէարդական հոսանքից զիտակցութեանը հաղորդւած առարկայի ոչ միայն ըմբռնելի ութիւնը, այլ նաև որ ակը։ «Միաժամանակ կատարող զգայութիւնները ազդում են մէկը միւսի վերայ» — ահա այդ օրէնքի կարձ բանաձեր. (նոյնն է նաև երար յաջորդող զգայութիւնների գէպքում, ես աչքի առաջ ունեմ միայն միաժամանակեայ զգայութիւն-

1) Քաղում եւ Ցիէնից՝ «Leitfaden d. physiologischen Psychologie», 1891, Տ. 36, ուր հեղինակը վրայութիւն է բերում Հերինգից։

ները պարզութեան համար): «Ամեն մի իր մենք ըգում ենք մի ուրիշ երի յարաբերութեամբ» — ահա Վանդի աւելի մշտշապատ բանաձեր յարաբերութեան այդ ընդհանուր օրէնքի համար, որ այս կամ այն ձևով յայտնի է եղել հոգեբաններին Հօրսի օքերից։ Յաճախ ինչ-որ խորհրդաւոր նշանակութիւն են վերագրել զրան. և թէ անշուշտ մեզ անյայտ են այդ օրէնքի հետ կապակցւած պրօցէսների մանրամասնութիւնները, բայց և այնպէս տարակոյս չկայ, որ զբանք բնախօսական բնոյթ ունեն և նէարդական հոսանքների փոխադարձ ազգեցութեան արդիւնք են հանդիսանում։ Շատ բնական է, որ հոսանքների այդ փոխազգեցութիւնը կարողանում է զգայութեան փոփոխութիւն առաջ բերել։

Նման փոփոխութեան օրինակներ ցոյց տալը զըժւար չէ<sup>1)</sup>, Նոտաները իրար աւելի զուրեկան են զարձնում ակորդում, իսկ զոյները՝ ներւածակ աժբողջութեան մէջ, կաշւի մակերեսի մի մասը տաք ջրի մէջ ընկղմելիս՝ ջերմութեան զգայութիւն ենք ստանում. իսկ եթէ աւելի մէծ մաս ընկղմենք՝ ջերմութեան զգայութիւնը կասատկանայ, չնայած որ ջրի տաքութիւնն ինարկէ մնում է նոյնը։ Նմանապէս տեսանելի առարկաների մեծութեան համար խրօմատիկ մինիմում գոյութիւն ունի. ցանցաթաղմթի վերայ տպաւորւելիս, զրանք պէտք է որոշ թուզ նէարդային թելիկներ զրգուն, ապա թէ ոչ գունաւոր զգայութիւն բնաւ չի առաջանայ։ Վէրէքը նկատել էր, որ ճակատի վրայ գրւած տալէրը ա-

1) Սրբ առաջառ օրէնքի կորսզ էր ծառայել այն գլուխը, երբ կրնաչ ու կարմիր դոյները մհաժամանակ ներդորեկով ցանցաթաղմթի վերայ զեղենի զգայութիւն են առաջացնում. Բայց ես այս օրէ նակը բերելոց ձեռնպահ եմ մնում, քանի որ յայտնի չէ, արդեւք նէարդական հոսանքները առաջական նէարդի առընթեր թիկներով են անցնու։ թէ ոչ։

ւելի ծանր է թւում, եթէ սառն է, և աւելի թեթե՛  
եթէ տաք է: Աւրբանչիչը գտաւ, որ մեր բոլոր  
զգայաբաններու փոխադաբար ազդում են իրենց  
յարուցած զգայութիւնների վերայ: Փոքրի ժնթակաց  
անհատը չէր կարող տարբերել որոշ հեռաւորութեան  
վերայ գտնաւոր գունաւոր բծերը, բայց հէսց որ ական-  
ջին կամէրտօն հնչեցրին, կարողացաւ: Նոյն բանը  
կրկնեց մեծ հեռաւորութեան վրայ տառեր կարդալու  
փորձի գէպքում: Կամէրտօնը հնչելիս տառերը տե-  
սանելի դառան: Այս երեսիթի ամենասովորականն օ-  
րինակներն են ըստ երեսեթին ցաւի սաստկանալը  
աղմուկի կամ լոյսի գէպքում և սիրտը խառնելու-  
սաստկացումը այլ ընթացակից զգայութիւններից:

ԿՕՆՏՐԱՍՏԻ ՆԵՐԿՈՐԾՈՒԹԻՒՆՆԻ: Այսպէս կոչ-  
ւած «միաժամանակեայ զունաւոր հօնտրաստի» ե-  
րեսիթները կարող են որպէս ամենասովորականն օրի-  
նակներ ծառայել, թէ ինչ կերպ են նէարդական հո-  
սանքներն ազգում իրար վրայ: Վեր առէք զանազան  
վառ գոյնների մի քանի թերթիկներ: ամեն մէկի վերաց  
զրեք բոլորովին մինմոյն գոյնի մոխրագոյն թղթի  
մի-մի կտոր: յետոյ ծածկեցէք բոլոր թերթիկները սպի-  
տակ թափանցիկ թղթով, որը մեղմացնում է և մոխ-  
րագոյն գոյնը, և գունաւոր ֆօնը: Եւրաքանչիւր  
թերթիկի վերայ մոխրագոյն կտորը լրացուցիչ դոյ-  
նով գունաւորւած կթւայ ֆօնի գոյնին համեմատ, և  
զանազան մոխրագոյն կտորները այն աստիճան իրա-  
րից տարբեր գոյնի կերկան, որ ոչ ոք չի ճանաչի  
թէ դրանք բոլորը մինմոյն մոխրագոյն թղթի կտոր-  
ներն են, մինչև որ չբարձրացնի թափանցիկ սպի-  
տակ ծածկոցը: Հէլմհօլցի կարծիքով՝ այդ երեսիթի  
պատճառը մեր մէջ արմատացած սովորութեան թիւր  
գործադրումն է, որի գօրութեամբ մենք սովոր

ևնք հաշւի առնել այն միջավայրի գոյնը, որի միջով  
տեսնում ենք տարկաները: Միենայն իրը և պայ-  
ծառ երկնքի կապոյտ լուսով, և մոմի կարմրաւուն-  
դեղին լուսով, և նոյն իրի պատկերը արտացոլող  
կարմիր-փայտէ սեղանի յղկւած մակերեսի մութ-  
մոխրագոյն լուսով՝ միշտ իրեն յատուկ մինոյն գոյ-  
նի է երեւում, որը մեր միտքը յատկացնում է իրի  
արտաքինին նախորդ փորձերի հիմամբ և որով ուղ-  
ղում է միջավայրի թիւր ազգեցութիւնը: Հէլմհօլցի  
կարծիքով, վերևի օրինակում մեր մաքին թւում է,  
թէ սպիտակ թղթով ծածկւած ֆօնի գոյնը տարած-  
ւում է մոխրագոյն կտորի վերայ: Բայց սրպէսպի  
կտորը այդպիսի գունաւոր ծածկոցի տակից մոխրա-  
գոյն երեայ՝ պէտք է որ նա իրօք լրացուցիչ գոյնի  
լինի ծածկոցի վերաբերմամբ: ուստի և մենք կար-  
ծում ենք, թէ նա իրօք էլ լրացուցիչ գոյնի է: Հէ-  
լմհօլցը ցոյց տւեց, որ Հէլմհօլցի ահսութիւնը հիմքից  
զուրկ է: Անտեղի կիններ առաջ բերել այստեղ այս  
խնդրի խիստ մանրակրկիտ վերլուծումը: բաւական  
է յիշատակել, որ փաստերը վկայում են այս երե-  
սիթի բնախօսական բնոյթի մասին – դա մէկն է այն  
գէպքերից, երբ զգայական նէարդական հոսանքները  
համազգելիս այլ արդիւնք են առաջ բերում զիտակ-  
ցութեան մէջ, ինչ քանոր կառաջացնէին՝ եթէ ա-  
ռանձին-առանձին ագդելիս լինէին:

Յաջորդական կօնտրաստից: Նրա պատճառը յոդ-  
նածութիւնն են համարում: Այս կարգին են պատ-  
կանում տեսողութեան մէջ տեսողական հետքերը  
անւան տակ առաջ բերող փաստերը: Յամենայն  
գէպս պէտք է աշքի առաջ ունենալ, որ նախին  
զգայութիւնների տեսողական հետքերը կարող են գոյ-

ակցել ներկայ զգայութիւններին, և թէ առաջինները, թէ վերջինները կարող են իրար փոփոխել ճիշտ այնպէս, ինչպէս և մրաժամանակեայ զգայութիւնները:

Կօնտրաստի երկայթները աեղի ունեն ոչ միայն աեսանելիքի, այլ և միւս զգայութիւնների շրջանում, քայց շատ պակաս պայծառութեամբ. այդ պատճառով էլ ես բան չասացի դրանց մասին:

## ԾԱՐԺՄԱՆ ԶԳԱՅՈՒԹԻՒՆԵՐԸ

Ծարժման զգայութիւնների հոգեբանական կարեւորութեան պատճառով ես նրանց առանձին գլուխ եմ նւիրում: Ծարժման զգայութիւնները երկու տեսակի են լինում: —

1) Մեր մարմինի զգայունակ մակերեսի վրայով տեղափոխող առարկաների շարժման զգայութիւններ.

2) Մեր սեփական մարմինի՝ տարածութեան մէջ տեղափոխելու զգայութիւններ:

ՄԱՐՄԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՎԵՐԱՅ ԾԱՐԺԻՑ ԱԲԱՐԿԱՆԵՐԻ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ. Բնախօններն ընդունում են, թէ շարժման (մօտոր) զգայութիւն ծագել չէ կարող, եթէ չկան հետեւալ պայմանները. պէտք է յաջորդաբար իմանանք շարժող առարկայի գանապան զրութիւնները՝ ելակէտը (terminus a quo) ու յանդման կէտը (terminus ad quem). Քացի այդ, շարժող առարկայի իրար անընդհատ յաջորդող տեղափոխութիւնները պիտի կատարեն ժամանակի այնպիսի միջոցներում, որոնք նկատելի են գիտակցման համար: Իսկապէս այդ եղանակով մենք իմանում ենք միայն ամենազարդ

շարժումների մասին: Ժամացոյցի ոլարը XII-ի, իսկ յետոյ V-ի վերայ տեսնելիս՝ եղբակացնում ենք, թէ նա շարժւելիս է եղել այդ ժամանակամիջոցի ընթացքում: Արել նախ արկելքում, յետոյ արևմուտքում տեսնելիս, եղբակացնում ենք, թէ նա անցել է մեր զվարաց վրայով: Սակայն այդ մասին ե գրակացու թեան գալ մենք կարողանում ենք միայն առաջուց և աւելի անմիջական եղանակով մեզ յայտնի եղած փաստերի հիմամբ. այն-ինչ էկապէրիմէնտալ ճանապարհով պարզած է, որ մենք շարժման անմիջական և պարզ զգայութիւն ենք ունենում: Զէրմակը վաղուց մատնացոյց էր արել հետեւալ երկու փաստերի տարրերութեան վերայ—տեսել ժամացոյցի վայրկենի ուլաքի շարժումը ուղղակի նայելով նրա վերայ. կամ նկատել, որ ժամացոյցի ուլաքը տեղափոխութեան է նոյն ժամանակամիջոցին նայելով ցիֆէրբլատի մէկ ուրիշ կողմի վերայ: Առաջին գէպքում զգայութեան յատուկ (սպէցիֆիկ) որակութիւնը կայ, որ բացակայ է երկրորդ գէպքում: Եթէ կաշւի (օր. մէր ձեռքի) վերայ մի վայր գտնենք, որի վերայ կարգինի երարից մէկ դիւխով հետացած երկու մատների հըպումը մէկ զգայութիւն է առաջացնում, և այդ վայրում մատիտի սրած ծայրով 0,1 դիւխի երկարութեամբ մի գիծ քաշենք՝ պայծառօրէն կէտի շարժում կզդանք և մինչև իսկ կկարողանանք աղօտ կերպով որոշել արա ուղղութիւնը: Այս գէպքում, պարզ է, որ շարժման զգայութիւնը չէ ծաղում իր ելման և յանդման գէտերը նախապէս զիտակցւելուց, քանի որ տասն անգամ մեծ տարածութիւնն իսկ չէ տարրերւում գիտակցութեան կողմից կարկինի երկու մատների հալման ժամանակ: Նոյնը դիտել կարելի է և աչքի վե-

բայց եթէ ձեր մատները դնէք փակ աչքի վերայ՝  
անկարելի է նրանց համարել շօշափելիքի զգայութեան միջոցով. ուրիշ խօսքով ասած՝ այն հինգ շերտը աչքի վերայ, որ մատները զբգում են, չեն տարբերում մեր գիտակցութեան կողմից. բայց և այսպէս այդ մատների ամենափոքր շարժումն անգամ շատ պայծառ գիտակցում է որպէս շարժում և ոչթէ որպէս որևէ ուրիշ բան: Պարզ է ուրեմն, որ շարժման մեր զգայութիւնը տեղադրութեան զգայութիւնից շատ աւելի նրբազգաց լինելով՝ բնու չէ կարող ծագել այս վերջինից:

Զերմակի հետ գրեթէ միտք ամանակ ֆիրօրդ (Vierordt) ուշադրութիւն դարձեց մի քանի մշտական պատը քանիքների (իւլիւզիաների) գոյութեան վրայ. օրինակ հետեւաները: Եթէ մէկը կամաց դիմք մեր անշարժ ձեռքի գաստակի վրայ կամ անշարժ մատի վրայ՝ մեզ այնպէս կթւայ, թէ մեր ձեռքն է շարժւողը: Եթէ բութը դնէք ճակատին և անշարժ պահէք, ու սկսէք գլուխը պատել այնպէս, որ ճակատի կաշին անցնի մատի տակովը, դուք անպատճառ կզգաք՝ թէ այդ մատն է շարժում զլիսի շարժմանը հակառակ ուղղութեամբ: Նոյն բանը կարելի է դիտել՝ երբ մենք շարժում ենք մատները իրար մօտ. մատներից միքանիքը կարող ենք շարժել, միւսներն անշարժ պահել. բայց և այնպէս մեզ կթւի. թէ վերջիններն ել իրապէս շարժում են: Բայց ֆիրօրդի, այդ իլիւզիաները ժառանգութիւն են հանդիսանում ըմբռնութեան նախնական ձևի, երբ շարժումը թէպէտե գիտակցում էր որպէս շարժում, բայց վերադրում-յատկացւում էր ամբողջ «գիտակցութեան բովանդակութեանը», և ոչ

թէ սրա որևէ մէկ մոսկին: Ծմբռնողութեան աւելի զարդացած վիճակում, մակերեսի վերայ տռարկան շարժւելիս՝ մենք այդ երկոյթը այլու իրար հակառակ ուղղութեամբ կատարւող երկու շարժում չենք համարում, այլ ըմբռնութեան տարբերից մէկին բացարձակ հանդիսան ենք վերագրում: Օրինակ, տեսողական պրոցէսների դէպքում երբ տեսնում ենք, որ ամբողջ տեսողութեան դաշտն է տեղափոխուում, մենք կարծում ենք, թէ այդ ինքներս ենք տեղափոխուողը, կամ որ մեր աչքերն են տեղափոխուողը. Եթէ տեսողութեան դաշտի առաջաւոր մասում ըստ երևութին շարժում է մի առարկայ, մինչդեռ դաշտի յետին մասը անշարժ է մնում, մենք նոյնպէս կարծում ենք, թէ առարկան անշարժ է: Բայց սկզբում այդ տարբերումը աղօտ է կատարւելիս եղել, սկզբում թւացել է, թէ տեսողութեան բոլոր առարկաները շարժում են և իրար շարժումն են հաղորդում. առարկայի և ցանցաթաղանթի ամեն յարաբերական շարժման դէպքում մեզ թւացել է, թէ առարկան էլ շարժում է, մենք էլ զգում ենք մեր սեփական շարժումը: Նոյն-իսկ այժմ էլ տեսողութեան ամբողջ դաշտի տեղափոխման դէպքում՝ մեզ թւում է, թէ մենք ինքներս էլ ենք շարժում, այն թեթև զլիսապրայտ ենք զգում, և ընդհակառակը, հիմտ էլ տեղափոխութիւնը մենք ամբողջ տեսողութեան դաշտին ենք վերագրում, երբ յանկարծակի շուռ ենք տալիս մեր զլուխը կամ արագ շարժում ենք մեր աչքերը այս ու այն կողմը: Նոյն իլլիւզիան տեղի է ունենաւմ, երբ չուռմ ենք աչքերը: Այս բոլոր դէպքերում մենք գիտենք, թէ ինչ է կատարւում իրօք, բայց պայմանների անսովոր լինելու պատճառով նախնական զգայութիւնը անարգել նորից հանդէս է զալիս: Նոյն

քանը դիտելի է ամպերի լուսնի մօսով անցնելիս: Մենք գիտենք, որ լուսինն անշարժ է, բայց այսպէս ենք տեսնում, թէ նա ամպերից արագ է շարժւում: Նոյն-իսկ աչքերը դանդաղ շարժւելիս՝ նախնական ըդգայութիւնը մնում է իր ոյժի մէջ: Եթէ ուշադրութեամբ դիտենք՝ այստեղ էլ կնատենք, որ առարկան, որի վերայ ուղղւած է մեր հայեացքը, ասես թէ շարժւում է դէպի մեր աչքը: Բայց ամենաարժէքաւոր դիտողութիւնը այս հարցի նկատմամբ Շնէյդէրինն է<sup>2)</sup>: Նա քըն-նում է խնդիրը զօօպսիաօլոգիական (կէնդանիների հոգեբանութեան) տեսակէտից և բոլոր դասերի կենդանիների կեանքից վերցրած օրինակներով ցոյց է տալիս, թէ շարժման միջոցով է, որ կենդանիները ամենից հեշտ կերպով իրար ուշադրութիւնն են գրաւում: «Կեղծ մահանալու» բնագիր (ինստինկտը) իսկի կեղծում կամ ձեւացում չէ, այլ պարզապէս անից պատճառաւած՝ անդամների կաթւած է, որի շնորհիւ միջատը, խեցգետնակերպ կամ այլ կենդանին խուսափում է թշնամուց, որովհետև իր անշարժութեան պատճառով նրսն աննկատելի է մնում: Նման կերպով երեխաները պահմանուկ խաղալիս բոլորովին անշարժ են մնում և շունչերը պահում, երբ մօտենում է որոնողը: Ընդհակառակը, հեռուցիմեր վրա մէկի ուշադրութիւնը գարձնել ցանկանալիս՝ սկսում ենք ալլամայ մեր ձեռքերը թափահարել, վեր-վեր թռչել և այլն: Թէ անշարժութիւնն ինչ աստիճան առարկան աննկատելի է դարձնում՝ կարելի է տեսնել կենդանիների վրայ, երբ սրանք դարձնակալ ենքած՝ որսի են սպասում կամ հալածանքից թագ կենում: Անտառում են թէ բոլորովին անշարժ մնանք՝ թռչուններն ու սկիւռ-

<sup>2)</sup> G. H. Schneider «Vierteljahrsschr. für wiss. Philos.», II, 377.

ները ուղղակի կդան-կդիպչեն մեզ: Ճանճերը նստուած են մեռած թռչունների ու անշարժ պառկած գորաերի վրայ: Միւս կողմից մենք սաստիկ ցնցւում ենք, երբ նկատում ենք, որ շարժւել է սկսում այն առարկան, որի վերայ նստած ենք. խիստ սոսկում ենք զգում, երբ մի միջատ յանկարծ սողում է մեր կաշւի վրայ, կամ երբ կատուն աննկատելի կերպով մօտենալով սկսում է շփւել մեր ձեռքին. խտուատալը չափազմնց զօրեղ է ներգործում—այս բոլոր փաստերը ցոյց են տալիս, թէ ինչ աստիճան ազգու գրգիռներ պատճառելու ընդունակ է շարժման զգայութիւնն ինքն ըստ ինքեան: Կատուի ձագը անդապելի կերպով վագում է գլորւող զնդակի յետեից: Տպաւորութիւնները, որոնք ինքն ըստ ինքեան այնքան թոյլ են, որ աննկատելի են մնում, իսկոյն եեթ ուշադրութիւն են զրաւում հէնց որ իրենց յարուցանող տռարկաները շարժւել են սկսում: Մեր կաշւի վրա անշարժ նստած ճանճը չենք նկատում. բայց հէնց որ շարժւել է սկսում՝ իսկոյն զգում ենք իր ներկայութիւնը: Իր նսեմութեան պատճառով չնկատող ստերը՝ շարժւելիս աչքի է ընկնում: Մեր ցանցաթաղանթի պէրփէրիկ մասերի զիստուր դերը պահապանների դեր է, որոնք ձայն են տալիս իրենց վերայ ընկնող լոյսի ճառագյթներին—«այդ մվ է», և ասես թէ դէպի այն կողմն են կանչում գեղին բիծը: Կաշւի մեծ մասն էլ կատարում է նոյն դերը մատների ծայրերի նկատմամբ:

Պարզ է, որ առաջը կայի տակովը կաշւելը (գրգուժան արդիւնքի տեսակէտից) հաւասար է կաշւի մակերեսի վրայ ով առարտկայի շարժւելուն: Երբ զննում ենք առարկաների ձեռն ու մե-

ծութիւնը տեսանելիքի կամ շօշափելիքի միջոցով՝  
աչքի կամ կաշւի մակերեսի շարժումներն անընդհատ  
են ու անզստելի: Ամեն մի այլպիսի շարժման գէպ-  
քում առես թէ առարկայի մակերեսի վերայ բաղ-  
մաթիւ կէտեր ու գծեր են գծագրուում, որ և դրոշ-  
ւում է զիտակցութեան մէջ ու շաղրութեան միջոցով: Այն խոշոր գերը, որ կատարում է շարժումը մեր  
ըմբռնման գործառնութեան մէջ՝ առիթ տւեց հոգե-  
բաններից շատերին ապացուցանել. թէ տարածութիւնն  
ըմբռնելու գգայարանը նոյն ինքն մկաններն են: Այդ  
զիտականների կարծիքով, ոչ թէ մարմնի «զգացող  
մակերեսը», այլ «մկանների զգայութիւնն» է, որ տա-  
րածայնութեան օբեկտիւ յատկութիւններն իմանալու  
աղբիւր է հանդիսանում: Բայց նրանք աչքաթող են  
արել, թէ մկանների շարժումները նրափիսի ուժգոր-  
նութեամբ հրաւիրում են մարմնի զգացող մակերես-  
ները մասնակցելու տարածութեան ըմբռնման գործին,  
այն թէ ապաւորութիւնները տարբերելու ընդունա-  
կութիւնը ինչ մեծ կախում ունի այդ տպաւորութիւն-  
ներին ենթարկելող մակերեսների շարժունութիւնից:

Մեր յօդային մակերեսները շօշափելիքի զգայա-  
րաններ են. բորբոքած վիճակում դրանք չափազանց  
հիւանդագին զգայուն են դառնում: Բայց ճնշումից  
միակ զրգիւր, որ ազգում է դրանք վրայ՝ դրանց  
մէկը միւսի վրայով շարժելն է: Մեր անզամների  
ընած գիրքի զիտակցումը՝ ըստ երեսութիւններից է  
կախւած: Ոտքի կաշւի և մկանների անզգայութիւն  
(անէսթէսիա) ունեցողները շատ անդամ ապացուցա-  
նում են, որ հիւանդ ոտքի յօդական զգայողութիւնը  
չէ չքացել—նրանք առողջ ոտքով ցոյց են տալիս, թէ  
բժիշկը ինչ զիրք է տւել իրենց հիւանդ ոտքին:

Հօլդէյդէրը (Բերլինում) յատուկ ապարատի միջոցով  
սովորում էր ձեռքի ու ոտքի մատները կբաւորաբար  
պտոյտ գալ զանազան յօդերում. նոյն ապարատը որո-  
շում էր յօդերին հաղորդած շարժման արագութիւնը  
և պտուման անկիւնի մեծութիւնը: Պտուման նը-  
ւագագոյն անկիւնները, որ զգացումը էին, մէկ ան-  
կիւնային աստիճանից (գրադուսից) շատ փոքր էին  
բոլոր յօդերի համար բացի մատնեքի յօդերից: Հօլդ-  
էյդէրի ասելով, անզամների այդչափ փոքր անզա-  
փոխումները հազիւ թէ նշմարելի լինեն տեսանելիքի  
միջոցով: Այդ գէպքերում թէ կաշւի անզգայութիւնը  
(անէսթէսիա), արհեստական կերպով ինզուկտիվ հո-  
սանքով առաջ բերւած, և թէ շարժող ուժի կողմից  
կաշւի վերայ գործ դրող զանազան աստիճանի ճնշ-  
շումները ոչինչ փոփոխութիւն չէին առաջ բերում  
յօդային շարժումների ըմբռնութեան մէջ: Ընդհակա-  
ռակը այդ ըմբռնութիւնը զնալով աւելի ու աւելի  
պայծառ էր դառնում, քանի գագարում էին արհես-  
տական անզգայացման, միջոցով ճնշման ընթացակից  
զգայութիւնները: Իսկ երբ որ յօդերն իրենք էին ար-  
հեստաբար անզգայացնուում, շարժման զգայութիւնը  
աղօտանում էր, իսկ պտուման հազիւ նշմարելի ան-  
կիւնները մեծանում: Հօլդէյդէրի կարծիքով, այս բո-  
լոր փաստերը ապացուցանում են, որ յօդային  
մակերեսները և միայն նը անք են ըն-  
դունալու անները այն տպաւոր ու թիւն-  
ների, որոնց միջոցով անմիջաբ ար-  
գիտակցուում են մեր անդամների շար-  
ժում մնելու մասին:

ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ Մէջ ԿԱՏԱՐԻՈՂ ՇԱՐԺՄԱՆ  
ԶԳԱՅՑՈՒԹԻՒՆՆԵՐ. Արանք կարող են բաժանել—պը-  
քէՄՄ. ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

տըստման զգայութիւնների և տեղափոխման զգայութիւնների:

Որչափ որ պարզւած է, ականջի լաբիրինթոսը  
(կամարածե խողովակները, utriculus-ը և sacculus-ը)  
ըստ երևութիւն ոչինչ առընչութիւն չունէ լսելիքի  
հետ. Ներկայումս վերջնականապէս հաստատւած է,  
որ կամարածե խողովակները առանձին՝ վեցերորդ  
զգայութեան գործարան են հանդիսանում, որը պլ-  
տըտման զգայութիւն է կոչում. Առլեկտիվ աղջու-  
մից առաջանալիս այս զգայութիւնը՝ դլխապտոյ-  
տը ն է, կամ vertigo-ն, որին արագ միանում է արտի  
խառնելը. Լաբիրինթը գրգռող հիւանդութիւնները (ներ-  
քին ականջի) սատուիկ զլխապտոյա են պատճառում:  
Խողովակների տրամատիկ խանդարմունքները (Մէ-  
ֆիէրի հիւանդութիւն) սախողում են թռչուններին  
ու կաթնասուններին վայր ընկնել և գէս ու գէն  
ընկնել, կառարելով այնպիսի շարժումներ, որոնք ա-  
մենից շատ ենթադրել են տալիս, թէ այդ կենդանի-  
ները անկման սուս զգայութիւններից են տախջլում,  
որը հակակշռել են աշխատում՝ դէպի հակառակ կող-  
մըն ուղղուած բէֆլէկտոր շարժումներով. Աղաւու  
թաղանթախողովակների գարվանիկ գրդուումը զլխի և  
աշքի ճիշտ նոյնօրինակ շարժումներ է առաջացնում,  
որոնք որ տեղի են ունենում, երբ այդ կենդանինե-  
րին իրապէս պտտացնում էք: Համբ ու խուլերի խո-  
շոր տոկոսը (սրանցից շատերի խողական նէարդերի  
ու լաբիրինթոսի խանդարումը նոյն հիւանդութիւնից  
էր առաջացել, որը զրկել էր սրանց լսողութիւնից)  
պտտելիս բոլորովին չեն ենթարկւում դլխապտոյի:  
Պուրկինիէն և Մախը աղացուցել են, որ ինչն էլ որ  
ինի պտտման զգայութեան գործարանը՝ նա պիտի  
անպատճառ զլխում գտնուի: Ճիշտ էկարդինանի.

Քով Մախը տպացուցեց, որ ոչ մի դէկըռում նա չէ  
կառա սահմանի մարմնի մնացած մասերում:

Երեք փոխադարձաբար ուղղահայեաց մակերեսոյթ-ներում տեղաւորւած վեց փոքրիկ հարթաչափեք հանդիսանալով՝ կամարաձև խողովակներն, ըստ երեւութին, լաւ յարմարեցւած են պատման զգայաքան լինելու համար։ Բաւական է միայն ենթազրել, որ երբ գլուխը գտնում է այդ մակերեսոյթներից մէկում, ենդօլիմֆայի յարաբերական ինէրցիան իսկոյն եեթ սաստկացնում է դրա ճնշումը նէտրդերի ծայրերի վերայ համապատասխան ամսութայում։ և այդ ճնշումը կէնտրօնական գործարանին նէտրդպական հոսանք է հաղորդում, որով գլխապլատոյանում է, ըստ երեսութին, փոքր ուղեղը։ Այդիսակի գործարան հանդիսանում է, ուղղականի ուղղութիւնը ամրող պրօցէսի նպատակաւոր նշանակութիւնը ու ամրմնի ուղիղ պահեեն է։ Եթէ մարդ, կանգ-դիսի ու ամրմնի ուղիղ պահեեն իր մարմնի նած ու աչքերը փակած, ուշը դարձնի իր մարմնի գիրքի վերայ կնկատի որ մի վայրկան անդամ հաւասարակշռութեան մէջ չէ մնում։ Դէպի մէկ այս, աստարակշռութեան մէջ չէ մնում։ Դէպի մէկ այս, մէկ այն կողմը սկսող անկումները շարունակ ուղ-դում են մկանների կծկումներով, որոնք վերականգ-նում են հաւասարակշռութիւնը։ Կթէպէտ այդ դէպ-քում հաւասարակշռող կծկում առաջացնող պատ-ճառների թւում են անշուշտ այն ապաւրութիւն-ները, որոնք դրաից ստանում են ջիլերը, յօդակա-պերը, յօդերը, ոտքը ներբանը, բայց եայնպէս, ըստ երեսութին, ամենազօրեղ ու սպէցիֆիկ բէֆլէկս է հան-դիսականում այստեղ գլխապայտի սկսող դէպայտիւ-գիսամում։

րեռմ յիշատակւածները, ծագում է հաւասարակը-  
շուրթիւնը խանգարւելիս: Երբ փոքր ուղեղը քայլքայ-  
ւում է՝ պատասխանող բէֆլէքսը կարգին զլուխ չէ  
գալիս, և որպէս հետևանք ստացում է հաւասարա-  
կշուրթեան կորուստը: Փոքր ուղեղը զրգուելիս՝ առաջ  
են գալիս, զիխապտոյտ, հաւասարակշուրթեան կորուստ  
և սրտի խառնումն. զիխի միջով հոսանք անցկացնելը  
գանաղան ձեր զիխապտոյտ է առաջացնում, նայած  
հոսանքի ուղղութեանը: Հաւանական է թւում, որ  
այս զգայութիւնները անօրէնողը փոքր ուղեղի  
կէտրօնի զրգուելն է: Բացի իրանի ու վերջաւորու-  
թիւնների բէֆլէքսներից, պառյափ զգայութիւնը աշ-  
քերի ինձորների շարժումն է առաջացնում իրական  
շարժմանը հակառակ ուղղութեամբ, որի հետ կա-  
պակցւած է աեսողական զիխապտոյտ (օպսիկ ու-  
տից) կոչւած սուբեկտիվ երևոյթը: Հաւասարաչափ  
պտառմը յատուկ զգայութիւն չէ յաբուցնում, պլ-  
տառմը արագանալիս կամ՝ գանդաղանալիս, ընդհանրա-  
պէս ասած՝ պտառման արագութիւնը փոխուելիս, ամ-  
պուլաների ծայրի գործարաններն իրենց ազդումն են  
ստանում: Յամենայն զէպս զգայութիւնն ինքը միշտ  
կտրճատի է լինում, արագ պտառելուց յետոյ հակա-  
պարձ շարժման զգայութիւնը կարող է տեել մօտ մի-  
ըսպէ, հետպհետէ թուլանալով:

Տեղափոխման (յառաջ ու յետ շարժւելու) գգայութեան պատճառը դեռևս լաւ չէ պարզւած։ Այս գգայութիւնը տեղաւորում են կամարաձև խողովակներում, երբ սրանք, ինչպէս կարծւում է, միաժամանակ հոսանքներ են ուղարկում դէպի ուղեղը և utriculus-ը։ Այս խնդրին վերաբերեալ վերջին էկոպէրիմէնտներն անող Դէլաժը ցոյց է տալիս, որ այդ գգայութիւնը չէ կարելի տեղադրել ուիսի մէջ, այլ

աւելի հաւանական է ամբողջ մարմառում տարածել, ինչ չափով որ սրա առանձին մասերը (արիւնատար երակները, փորոտիքը) շարժուն են իրար վերաբեր-մամբ և շփուռմ ու ճնշում են կրում դրանց համե-մատական ինէրցիայից տեղափոխման ընթացքում։ Սակայն գեռ չէ կարելի տաել, թէ Դէլաժը հիմք ու-նէր Ժմանելու լաբիրինթոսի մասնակցութիւնը դդա-յութեան այս ձեռւմ։ Հարցը թողնում ենք չուծւած։

ԳԱՐԱՎԱԿԻ ԶԳԱՅՈՒԹԻՒՆԸ

ԶԳԱՅՑԻԱՂ ՆԵՐԿԱՆ ՈՐՈՇ ՏԵԼՈՂԱԽԹԻՒՆ ՈՒՆՔ:  
Թող մէկը փորձ անի, էլ չեմ ասում բռնել, այլ լոկ  
նշանաբել ու դիտել ժամանակի ներկայ տկնթարթը.  
— փորձը բոլորովին ապարդիւն կանցնի: Ուր է այդ  
ներկայ առածք: Մենք գեռ նրան բռնել չկարողա-  
ցած նա ճալւել—չքացել է, փոխանցել է իրեն յա-  
ջորդող ակնթարթին: Հօջոօնի յիշատակած բանառ  
տեղի առածի պէս —

1) *якът на всички български народи*

